№ 174 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՕԳՈՍՏՈՍԻ
1910
ԵՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՕԳՈՍՏՈՍԻ № 174
ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ
5 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով)։

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Օգոստոսի 7-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց

ՓԱՇՕ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԵԴԻԳԱՐԵԱՆՑԸ,

որի մասին խորին վշտով յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին հանգուցեալի կինը՝ Սօֆիա Պաւլօվնա, որդին՝ Սերգէյ Պաւլօվիչ և հարսը՝ Ելիզավէտա Նիկիտիչնա ԵԴԻԳԱՐԵԱՆՆԵՐԸ։ Աղօթքն ամեն օր, երեկոյեան ժամը 7-ին, Վելիկոկնեաժեսկայա փողոց № 34 տանը։ Թաղման մասին կը յայտարարվի առանձին։ 921. 2—2

Դպրոց Կատ. Լիսիցեանի

Տեղափոխվում է նոր, աւելի ընդարձակ բնակարան՝ Սերգիեւսկայա փող. սեփ. տ. № 20, վերին յարկ։ Ընդունվում են տղաներ և աղջիկներ պատրաստականի սարին, միջին և բարձր բաժանմունքներն և առաջին դասատունը (աղջիկները նաև 2-րդ դաս.) օգոստոսի 27-ից առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը։ Ուսումը սկսվելու է սեպտ. 6-ին։
(10,17,24,27,1.) առ. 918. 5—1

Բագուի Հայոց Եկեղեցական-Ծխական Դպրոցների Հոգաբարձութիւնը

յայտնում է ի գիտութիւն բոլոր խնդրատու ուսուցիչների, որ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԽՄԲԵՐՆ արդեն կազմված են և նորընտիր ուսուցիչներին պաշտօնական հրաւիրագրեր են ուղարկված։
(ա.) 924. 1—1

Թիֆլիսի Մանթաշեան Առեւտրական Ուսումնարան

Աշակերտների ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ օգոստոսի 23-ին, 24-ին և 25-ին։
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ օգոստոսի 26-ին, 27-ին և 28-ին.
Խնդիրների ընդունելութիւնները ամեն օր՝ առ. ժամը 9-ից մինչև 12-ը։
(Հ. Հ. 2.) առ. 926. 3—1

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ
Այսօր, երեքշաբթի, օգոստոսի 10-ին
25-ՐԴ ՕՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ
ԿՄԲՇԱՄԱՐՏԵՆ 5 ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԶՈՅԳԵՐ.

1) Վճռական՝ ՊԵՏԵՐՍՕՆ—ՄԻԽԷԼ-ՄԱՅԵՐ։ 2) ԿԱՐՄԻՐ ԴԻՄԱԿ—ՎԱՆ-ՌՕՍԷՆ։ 3) Նախկին ՍԵՒ-ԴԻՄԱԿ—ԱՊՕԼԼՕՆ։ 4) ՆԱՋԻ—ԼԻՍՏԻՆՕՎ։ 5) ՌԱՃԻՆ—ՌԷՅԶԵՐ։
Ըմբշամարտը վերջնականի մօտալուտ է։
Նախ քան ըմբշամարտը սկսելը՝ երեկոյեան ժամը 9-ից— ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ։ Ըմբշամարտի սկիզբը երեկ. ժ. $10^{1}/_{2}$-ին։ Գները մատչելի են (30 կ. մինչև 2 ր.) Նուագում է կանանց երաժշտախումբը։ Կայ փառահեղ խոհանոց։
(առ.) 925. 0—1

Առաջիկայ $19^{10}/_{11}$ ուսումնական տարում

Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցում

Նորեկների ընդունելութեան համար ազատ տեղեր կան երրորդ, վեցերորդ և եօթներորդ դասարաններում։
Խնդիրները (ծննդեան վկայականների հետ միասին) ընդունվում են մինչև օգոստոսի 21-ը և մտնել ցանկացողները պէտք է քննութեան ներկայանան օգոստոսի 27-ին։
Տեսուչ՝ Ստ. Մալխասեանց
(2, 25, օգ. 10) առ. 795. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Այսօր, երեքշաբթի, օգոստոսի 10-ին
տեղի կունենայ
Ընտանեկան երեկոյթ
Ժողովրդական Տան Հայկական Սեկցիան կը ներկայացնէ
ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱ
Կոմէդիա 1 գործող.
ԴՕԿՏՕՐ ԹԱԴԻՈՍ
Վօդեվիլ 1 գործող.

Երեկոյթին կը նուագեն լարանուագների խումբը և սազանդարներ։
Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 1 ր., կանայք 50 կ.։
Ներկայացման տոմսակները՝ 10—30 կ. արժողութեամբ՝ ծախվում են Ժողովարանի շվէյցարի մօտ։
Սկիզբը երեկոյեան ժամը 9-ին։
(ա.) 923. 1—1

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔ

I

Ժամանակակից շահերի մարմնացումները զանազան շաւիղներով սկսում են կենտրոնանալ Մերձաւոր Արեւելքի շուրջը։

Պարսկաստանի ալեկոծ դրութիւնը, Կրետէի ճգնաժամային վիճակը, Ալբանիայի մէջ ծխացող կրակը, դրուզների, քիւրդերի և արաբների մէջ յուզմունքները, եռանդուն ձգտումները՝ շահերի—ազդեցութեան շրջաններ Պարսկաստանում և Թիւրքիայում—այդ բոլորը՝ կապված նոր միջազգային համաձայնութիւնների և դաշնակցութիւնների հետ՝ թեքում են յաճախ պետութիւնների առանձին ուշադրութիւնը դէպի Մերձաւոր Արեւելք և դրդում զբաղվել մի շարք խնդիրներով, որոնք վերաբերում են նրա տնտեսական և քաղաքական կեանքին։

Մերձաւոր Արեւելքը Եւրոպայի և Ասիայի, հիւսիսային և հարաւային ծովերի հանգոյցի մէջ գտնվելով մի այնպիսի տեղ է բռնում, ուր շփվում և շօշափվում են բազմաթիւ շահեր թէ առանձին պետութիւններին և թէ համաշխարհային քաղաքականութեան և կեանքին վերաբերեալ։

Այժմ կիսաբարբարոս, կիսակուլտուրական և բաւական աղքատ վիճակի մէջ գտնվող Մերձաւոր Արեւելքը հին դարերում ունէր բարձրագոյն կուլտուրա և բարգաւաճում։ Նա շէնացրել էր իր քաղաքները և գիւղերը, նա ստեղծել էր երկրագործութիւն և արհեստ, նա զարգացրել էր գիր և գիտութիւն։

Աւերակները, հիաքանչ աւերակները վկայ են մի անցեալի, որ զարմացնում է իր հոյակապութեամբ, իր վերին աստիճանի բարգաւաճ կուլտուրայով։

Հին Ասորեստանի, Բաբելոնի, Ուրարտուի սեպագրերը յայտնագործում են մի աշխարհ, որ բազմաթիւ դարեր ապրել է քաղաքական և հասարակական կեանքով և խոշոր ազդեցութիւն է ունեցել քաղաքակրթութեան նախնական զարգացման վրա։

Հին կուլտուրայի այդ երկիրը ներկայումս վայրենութեան, խաւարի, յաճախ ապստամբութեան ասպարէզ դարձած մի ընդարձակ տարածութիւն է, որի այս ու այն անկիւնում պահպանվել են վաղեմի կուլտուրայի մնացորդները, իբրև ապացոյց այն բանի, որ երկիրը նորից կարող է վերադարձնել իր բարգաւաճ վիճակը, եթէ տրվեն նրան ազատ և բեղմնաւոր զարգացման պայմաններ։

Հարուստ է երկիրը—այդ անկասկած է։ Կարելի է նրանից մի առատ շտեմարան շինել—դա տարակուսանքից դուրս է։ Այնտեղ հանքային անբաւ հարստութիւններ կան—դա արդէն պարզվել է փորձնական ուսումնասիրութիւններից։

Եւ անշուշտ՝ ով տէր կանգնի այդ երկրին, ով ժառանգի այդ հոյակապ հարստութիւնը, նա մեծ շահեր կունենայ իր համար։

Եւ ահա իւրաքանչիւր ոք, պետութիւններից ամեն մէկը ձգտում է ինքը բռնել այդ տեղը, ինքը դառնալ ժառանգը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 7 օգոստոսի

Կրասնօսելսկի բանակատեղում նոր օֆիցերական աստիճան ստացած անձնաւորութիւններին Կայսրը դիմել է հետեւեալ ամենաողորմած խօսքերով.

Ձեր ապագայ պաշտօնի մէջ եղէք մաքուր եւ հաւատարիմ, կատարելով ձեր պարտքը բոլոր ոյժերով, լիովին խելամտութեամբ եւ եռանդով։ Հաւատացէք Աստուծուն եւ Մեր հզօր հայրենիքի մեծութեան։ Յարգանքով վերաբերվեցէք դէպի ձեր մեծերը եւ ընկերական սիրով դէպի իրար։ Եղէք խիստ եւ անաչառ դէպի ձեր ստորադրեալ զինուորները։ Օրինակ առէք ձեր փառաւոր նախնիներից, որոնք կարողացել են ծառայել Ռուսաստանին եւ իրանց Թագաւորներին։ Ցանկանում եմ ձեզ ի սրտէ յաջողութիւն եւ շնորհաւորում եմ ձեր օֆիցերական աստիճանները։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 7 օգոստոսի

Կէսօրվայ $2^{1}/_{2}$ ժամին Պետերբուրգի մեծ ապարանքում կայացաւ անգլիական արտակարգ դեսպանութեան ընդունելութիւնը։ Կոմս Ռօբերտսին արարողապետը տարաւ Նորին Մեծութիւնների մօտ՝ հանդիսանալու։ Կայսրը հագել էր Պրէօբրաժէնեան գնդի հագուստ «Պօդվեազկա» օրդէնի ժապաւէնով։ Կոմս Ռօբերտսը Կայսրին և Կայսրուհուն ներկայանալուց յետոյ՝ ներկայացրեց Նորին Մեծութիւններին դեսպանութեան միւս պաշտօնեաներին։ Դրանից յետոյ դեսպանութեան անդամները կառքերով գնացին Ալեքսանդրիա և ներկայացան Թագուհի Մարիա Ֆեօդորօվնային։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 7 օգոստոսի

Երեկոյեան անգլիական արտակարգ դեսպանութեան գալստեան առիթով կայացել է Բարձրագոյն ընթրիք, որը պատրաստված է եղել 39 հոգու համար։ Թագաւորը եղել է Սկօտսգրէյեան գնդի շէֆի հագուստով։ Ընթրիքին մասնակցել է Մեծ Իշխան Միխայիլ Ալեքսանդրօվիչը, արտակարգ դեսպանութիւնը կոմս Ռօբերտսի գլխաւորութեամբ, Պետերբուրգի անգլիական դեսպանութեան պաշտօնեաները, մինիստրների խորհրդի նախագահը, պալատի, զինուորական և ծովային մինիստրները ու արտաքին գործերի մինիստրութեան կառավարիչը։ Ընթրիքի ժամանակ Նորին Մեծութիւնը խմել է անգլիական Թագաւորի կենացը։ (Հ. Գ.)

Պիլզէն, 7 օգոստոսի

Մի բժշկի հարցմունքին Էրլիխը պատասխանել է, որ յոյս ունի մինչև 6—8 շաբաթը «606» պրէպարատը դարձնել ամբողջ բժշկական աշխարհի սեփականութիւն։ (Հ. Գ.)

Հռօմ, 7 օգոստոսի

Տրանում պատահել է խոլերային հիւանդութեան 19 դէպք։ Բալի և Ֆօջի շրջաններում դրութիւնը անփոփոխ է։ (Հ. Գ.)

Բեռլին, 8 օգոստոսի

Գերմանիայում միսը չափազանց թանգանալու պատճառով, գերմանական մսավաճառների միութիւնը՝ Բրեսլաւում՝ ուղղակի դիմել է կայսրին, ներկայացնելով մի յիշատակագիր, որի մէջ խնդրում է վերջ տալ շրջակայ երկիրներից չորքոտանիների ներմուծման ժամանակ առնվող մաքսը և փոփոխել անասունների կերակրանիւթ առնվողը միաժամանակ, ոչնչացնելով հացահատիկների արտահանութեան ժամանակ տրվող նուիրատուութիւնը։ (Հ. Գ.)

Ռօֆօէ (Սամարսկի նահ.), 8 օգոստ.

Առաւօտեան 5 ժամին կաթսայի պայթիւնից ջրասուզվել է «Մօրեակ» ցռկանաւը (буксиръ)։ Ունեցուածքը ոչնչացել է Վօլգայի միջին մասերում։ Կորուստը 200,000-ի է հասնում։ Կան մարդկային զոհեր։ (Հ. Գ.)

Վօրօնէժ, 8 օգոստոսի

Ժամանել է ներքին գործերի մինիստրի օգնական Լըկօլինը, ծանօթանալու համար գիւղացիական հողաբաժինների վրա կատարվող երկրագործական աշխատանքներին։ (Հ. Գ.)

Ստարայա Ռուսսա, 8 օգոստոսի

Յունաց Թագուհին ճանապարհվել է Մօսկվա։ (Հ. Գ.)

Քիշինեվ, 8 օգոստոսի

Օրգէեվի գաւառում արտասովոր քանակութեամբ եկած կարկուտը գետինը տեղ-տեղ ծածկել է մօտ $1^{1}/_{2}$ արշին բարձրութեամբ։ Ծխախոտի և եգիպտացորենի ագարակները ու խաղողի այգիները ոչնչացել են։ (Հ. Գ.)

Պեատիգօրսկ, 7 օգոստոսի

Օգոստոսի 15-ին կը վերջանայ արդիւնաբերական դպրոցների կառավարիչների խորհրդակցութիւնը, որ տեղի է ունենում ուսումնարանական շրջանի հոգաբարձուի նախագահութեամբ։ Միջոցներ են մշակվում կովկասեան արդիւնաբերական դպրոցներն աւելի լաւ հիմքերի վրա դնելու։ Յիշեալ դպրոցների ցուցահանդէսը մէկ և կէս ամսվայ ընթացքում ունեցել է մեծ աջողութիւն։ Խորհրդակցութիւնները վերջանալու օրը կը փակվի նաև ցուցահանդէսը։ (Հ. Գ.)

Ասխաբադ, 7 օգոստոսի

Հաջինսկիի Չելեքէնեան նաւթահանքերում խփել է 300,000 պուդ նաւթ։ (Հ. Գ.)

Բաթում, 8 օգոստոսի

Շիլլօվեց քաղաքում այրվել են 28 տներ և 66 զանազան շինութիւններ իրանց մէջ գտնված շարժական կայքերով։ Գլխաւորապէս վնասվել է հրէական թաղը։ (Հ. Գ.)

Տուլա, 8 օգոստոսի

Իր կալուածքում սպանվել է Վենևեան գաւառի ազնուականութեան պարագլուխ՝ կամերհեր Դմիտրիյ Պօպօվը։ Սպանութիւնը կատարվել է իր որդու ձեռքով։ (Հ. Գ.)

Լօնդօն.—Ֆինլանդական սենատոր Լէօ Միխելինը յայտնել է «Daily News» լրագրի թղթակցին, որ Ֆինլանդիան հանգիստ կերպով սպասում է լինելիք դէպքերին և միշտ կը մնայ հաւատարիմ սահմանադրութեան։ Սէյմը կը հրաժարվի ներկայացուցիչներ ընտրել Պետ. Դումայի համար։ («У. Р.»)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլիս, 7 օգոստոսի

«Թանինը» հաղորդում է, որ Ազիմ բէյի և Պապրիկօվի միջև սկսված բանակցութիւնները արդէն վերջացել են. Թիւրքիան թոյլատրում է փախստականներին վերադառնալ և ներում է շնորհում այն պայմանով միայն, որ փախստականները յանձնեն զէնքերը։ Բօլգարական կառավարութիւնը մտադիր էր այդ պայմանների մասին հաղորդել փախստականներին, սակայն Բ. Դուռը վճռականապէս հակառակվեց, յայտնելով որ դա միջամտութիւն է իր ներքին գործերին. Բօլգարիան պէտք է յանձնէ վերադարձող փախստականների անուանացուցակը և երաշխաւորէ, որ նրա մէջ չեն մտնի այնպիսի անձինք, որոնց վրա չէ ծանրանում չէտաների մասնակցելու և քրէական յանցանքների մեղադրանքը։

«Թանինը» հաղորդում է, որ Թիւրք կառավարութիւնը թոյլ չի տայ պատրիարքին ազգային ժողով հրաւիրելու։

Նոյն թերթը մի ուրիշ յօդուածում, որ նուիրված է Մարիէնբադի տեսակցութեան, մատնանիշ է անում այն հակասութիւնները, որոնք նկատվում են Աւստրիայի ներկայ բարեկամական այն հաւաստիացումների մէջ, որոնցով հանդէս է գալիս իբրև պաշտպան Թիւրքիան տերրիտօրիալ անձեռնմխելիութեան սկզբունքի և նրա գործողութիւնների միջև, որը արտայայտվեց Թիւրքիայի ամենածանր կացութեան րօպէին՝ Բօսնիայի և Հերցէգօվինայի միացմամբ։

«Թանինը» շեշտում է, որ կրետական հարցում ոչ Աւստրիան և ոչ Գերմանիան Թիւրքիային չը տուին բարեկամական ապացոյցներ։ Այժմ նրանք շնորհակալութիւն են պահանջում չը մատուցած ծառայութիւնների համար։ Իսկական բարեկամութիւնը չէ կարելի հիմնել այդպիսի միրաժների վրա, ոչ էլ լոկ Թիւրքիայի անձեռնմխելիութեան մասին արված յայտարարութիւնների վրա։ Այնուամենայնիւ իր բաւականութիւնը յայտնելով Բալկանների խաղաղութիւնը ապահովող այդ տեսակցութեան առիթով, «Թանինը» գտնում է, որ համաձայնութիւն կայացնելու ժամանակը դեռ ևս չէ հասել, և խորհուրդ է տալիս սպասել, մինչև որ Թիւրքիայի բարեկամութիւնը մեծ արժէք կը ստանայ։

Գերմանական «Օսմանիշէր Լլօյդը» գրգռված տոնով է խօսում «Թանինի» այդ յօդուածի առիթով։ Դիպլօմատիական անտակտութիւն համարելով Բօսնիայի և Հերցէգօվինայի սպառված հարցին վերադառնալը՝ լրագիրը պաշտպանում է Գերմանիայի ու Աւստրիայի ունեցած վերաբերմունքը կրետական հարցում։ (Հ. Գ.)

Կ. Պօլիս, 8 օգոստոսի

Պաշտօնական շրջաններից բղխած տեղեկութիւնները վճռականապէս հերքում են «Տանի» հաղորդած այն լուրը, որ իբր Թիւրքիան մտադիր է Գերմանիայից գնել երկու զրահակիր նաւեր։ (Հ. Գ.)

Սօֆիա, 8 օգոստոսի

Թիւրքական կառավարութիւնը տեղեկացրել է բօլգարականին, որ քննիչ յանձնաժողով է կազմվել գտնելու և պատժելու այն անձնաւորութիւններին, որոնք մակեդոնական բօլգարներին զինաթափ անելու ժամանակ գործ են դրել բռնութիւններ։ Այդ ի նկատի ունենալով Բօլգարիա ապաստանած փախստականները կարող են վերադառնալ իրանց տեղերը, չը վախենալով հալածանքից և պատժից։ Թիւրքական դեսպանը այս մտքով ձևականօրէն կը յայտարարէ փախստականների ներկայացուցիչներին։ Վերադարձը կը կատարվի երկու կառավարութիւնների համաձայնութեամբ որոշված սահմանագծային կէտերով, որոնց ցուցակը կազմված կը լինի բօլգարական իշխանութիւնների ձեռքով։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Ուրմիա, 7 օգոստոսի

Քիւրդերը հրդեհել են Անզիր գիւղի հացահատիկները, կողոպտել են քաղաքային ջաղացը և սպանել ջաղացպանին։

Դէպի լիճը տանող միակ ապահով ճանապարհի պահպանութիւնը նահանգապետը յանձնել է աւազակ Արգիլ բէկին։ Յուզված տրամադրութիւն է տիրում։ Նահանգապետը խնդրել է Թաւրիզից զօրքեր ուղարկել։ Միրզա Քերիմխանի սպանութեան առիթով սկսված քիւրդական անկարգութիւնները մեծ չափեր են ստանում։ Հրդեհվել են երկու գիւղի հացահատիկները, սպանված է մի պարսիկ։ Կարասանու գիւղում օգոստոսի 6-ից սկսված հրացանաձգութիւն է տեղի ունենում քիւրդերի և գիւղացիների միջև։ (Հ. Գ.)

—

Ուրմիա, 7 օգոստոսի

Քիւրդերից կողոպտված գիւղացիների խումբը յանկարծակի յարձակվելով Ադլիէ անջումանի և քաղաքային վարչութեան վրա՝ պատառոտել է անջումանի դրօշակը և ծեծել ծառայողներին։ Դրանից յետոյ խումբը ներկայացել է նահանգապետին և պահանջել քիւրդերի դէմ պաշտպանել իրանց։ Ամբոխին հանգստացնելու համար ինչ-որ մի սպանութիւն կատարած պարսկի թնդանօթի են բռնել։ Շուկան և կառավարչական հիմնարկութիւնները փակված են եղել նախքան միջադէպը։ (Հ. Գ.)

ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Բեռլին, 2/15 օգոստոսի

Այսօր առաւօտեան Բեռլինի բնակիչները մեծ վշտով կարդացին լրագիրների տպած գումարբեր հեռագիրները, թէ երէկ, կիրակի, օգոստոսի 1/14-ին, երեկոյեան ժամը 10-ին, մի սոսկալի հրդեհ ոչնչացրել է Բրիւսէլի աշխարհահանդէսը։ Ամեն մարդ շտապում էր ձեռք բերել լրագիրներ՝ աւելի մանրամասն իմանալու աղէտի մեծութիւնը և ծաւալը։

Ես անմիջապէս հեռագրեցի «Մշակին» այդ ցաւալի լուրը։

Հետզհետէ եկող հեռագիրները ցոյց են տալիս, որ հրդեհից ոչնչացել են միայն բէլգիական, անգլիական, ֆրանսիական և իտալական բաժանմունքները, իսկ մնացած երկրների պավիլիոնները կամ բաժանմունքները կամ բոլորովին չեն վնասվել և կամ միայն շատ թեթև կերպով։ Մարդկային զոհեր չեն եղել, թէև առաջացած պանիկայից, երբ սկսել են մարդիկ իրար հրել՝ փախչելու համար, վիրաւորվածներ եղել են։

Այնուամենայնիւ աղէտը՝ նիւթական և գեղարուեստական տեսակէտից այնքան մեծ է, որ Բեռլինի բոլոր լրագիրները միաբերան ողբում են և համարում են այդ հրդեհը իբրև համաշխարհային մի աղէտ, անուանելով այդ կիրակին «սև կիրակի» (der schwarze Sonntag), որովհետև հրդեհը ոչնչացրել է ոչ միայն թանգագին ապրանքների ահագին քանակութիւն, այլ և գեղարուեստական շատ թանգագին առարկաներ։

Բէլգիական կառավարութիւնը առաջին րոպէին որոշում է փակել աշխարհահանդէսը, որ պէտք է բաց մնար մինչև նոկտ. 6-ը, բայց յետոյ որոշվել է ժամանակաւորապէս փակել մի քանի օրով, մինչև կործանված բաժինները կարելի լինի մի քիչ ուղղել և զտել։

Բեռլինի քաղաքային ինքնավարութիւնը, ինչպէս և բոլոր երկիրներինը և կառավարութիւնները փութացին ցաւակցական հեռագիրներով արտայայտել բէլգիական ազգին իրանց անկեղծ վիշտը և ցաւակցութիւնը մեծ աղէտի համար, անուանելով այդ աղէտը ոչ միայն բէլգիական, այլ և համամարդկային։ Հ. Առաքելեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՆԱՍԱԿԱՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

—

Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնի ազատվելը և մօտալուտ կայանալիք քաղաքային ընտրութիւնները առիթ են տուել տեղական ռուս մամուլի մի մասին յարձակողական դիրք բռնել դէպի քաղաքիս ինքնավարութեան գործադիր մարմինը՝ ուպրավան, անգամ դէպի ձայնաւորները։

Այդ պայքարը ի բոլոր սրտէ կարելի կը լինէր ողջունել, եթէ նա դրված լինէր իսկական հողի վրա, մղված լինէր մասսայական շահերը պաշտպանող տեսակէտից ու չը ստանար հէնց առաջին քայլերից մի կործանիչ, մարդկանց իմացականութիւնը մոլորեցնող, թունաւորող ուղղութիւն—նեղ նացիօնալիստական։

Եւ դժբաղդաբար՝ սա առաջին անգամը չէ Թիֆլիսի ընտրութիւնների ժամանակ. եղել են և անցեալներում՝ погромче витіи Ն. Ե. Նիկոլաձէ, բարեյիշատակ հանգուցեալներ՝ Վ. Լ. Վելիչկօ, Իլիա Ճավճավաձէ, և շատ ուրիշներ։ Ճիշդ է, Ն. Ե. Նիկոլաձէն իբրև խելօք մարդ և դէմօկրատիկ գրող աշխատել է ծայրերը վարպետօրէն թաքցնել, իսկ Վելիչկօն, Ճավճավաձէն կուել են բաց ճակատով ու միշտ տխուր հետևանքներով, որ չեն խրատել սակայն յետնորդներին։

Ամենքին լաւ յայտնի է մեր քաղաքների և գեմստվոների կազմակերպութեան հակաժողովրդական բնոյթը, մի բան, որ մասամբ խոստովանել է և կառավարութիւնը։ Քաղաքային ինքնավարութիւնը գտնվում է ազգաբնակութեան չնչին տոկոս կազմող տնատէրերի, իսկ գեմստվոներում՝ դեռ էլ աւելի քիչ տոկոս կազմող ազնուական-հողատէրերի ձեռքին։ Նրանք են տնօրինում ինքնավարութեան գործերը, ըստ իրանց դասակարգային շահերի, և գլխաւորապէս դրա մէջ է ինքնավարութեան պակասութիւնների աքիլլէսեան գարշապարը։ Ահա ինչու դէմօկրատիկ մամուլը, քաղաքական կուսակցութիւնները այդ կողմի վրա են դարձնում հասարակութեան ուշադրութիւնը, նրան փոփոխելու մէջ են տեսնում իրանց կոչումը, պարտականութիւնը։ Եւ իսկապէս մե՞թէ Թիֆլիսի ինքնավարութիւնը այն պատճառով է վատ, որ ղեկավարները հայեր են. մե՞թէ մամուլի ակնարկած Непотизмը նրա մէջ պայմանաւորվում է հայերի տիրապետութեամբ։ Ապա ինչ բանի վերագրել՝ օրինակ՝ Պետերբուրգի ինքնավարութեան խոշոր պակասութիւնները. չէ՞ որ այնտեղ չը կայ ազգայնութեան հարց և նրա անշնորհք ղեկավարները և ջերմ քննադատները մի ազգից են՝ ռուսներից. կամ կը հաստատէ՞ այդ մամուլը, որ օրինակ՝ Քութայիսում կամ Ալէքսանդրօպօլում ինքնավարական գործերը ուղիղ ճանապարհի վրա են դրված, որ այնտեղերը դժգոհներ չը կան, տեղեր՝ ուր ազգայնական շփումը (треніе) հասցված է մինիմումի... Պարզ է, որ հայերի գերիշխող դերը չէ մեր քաղաքային ինքնավարութեան պակասութիւնների պատճառը և դրութիւնը նոյնը կը մնայ, եթէ՝ դիցուք՝ Խատիսեանի տեղ լինի իշխ. Միքելաձէն, բժ. Ստեփանեանի տեղ՝ Գեղեվանովը, իսկ Զաքարի տեղ Կ. Թումանովը կամ մի ուրիշը. դարձեալ ինքնավարութեանը անմասնակից են լինելու ժողովրդական լայն խաւերը։

Մենք դեռ կը հասկանայինք մամուլի այդ դիրքը, եթէ նա ապացուցեր, որ քաղաքիս գերակշռող տարրը՝ հայերը կոխոտում են այլացեղ ազգաբնակութեան արդարացի պահանջները, բաւարարութիւն տալով միայն հայ ազգին. կա՞ն այդ տեսակ փաստեր և ինչու չեն հրապարակ բերվում։ Իսկ եթէ այս կամ այն պաշտօնին հայերն են հրաւիրում և ոչ վրացուն կամ Թուրքին, դա չէ՞ մեզ զբաղեցնողը. տանտէրական դուման, ուպրավան, ազնուականական գեմստվօն հակված են լինելու փրնտռել իրանց մարդկանց այստեղ թէ Պետերբուրգում, Օդեսսայում թէ Կուրսկում։ Եւ վերջապէս ինչպիսի հետևանքներ պիտի ունենայ մամուլի այդ մասին յայտարարած պայքարը։ Անշուշտ նա, որ ազգաբնակութեան անգիտակից մասը, այսինքն մեծամասնութիւնը, կանգնելու է ազգայնական դրօշի տակ և ընտրվելու են ոչ պէտքականները՝ առանց ազգի և կրօնի խտրութեան, այլ այս կամ այն ազգութեան թեկնածուները։ Սա է ցանկանում յիշածս մամուլի այդ մասը։ Պետրոս Զաքարեան

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

—

Աստրախանի թեմակալ առաջնորդ Մխիթար եպիսկոպոսը անցեալ ձմեռ շրջաբերական նամակներով յայտնեց իր թեմում գտնվող հայ դպրոցների հոգաբարձութիւններին, որ «իր զեկուցմամբ և Կաթողիկոսի հաւանութեամբ որոշվել է Աստրախանի թեմում թեմական տեսուչներ ունենալ»։ Նրանց ռոճիկները հոգալու մասին սրբազանը նոյն շրջաբերականում յայտարարում էր, որ թեմի բոլոր այն դպրոցները, որոնց տարեկան բիւջէն 1000 րուբլուց աւելի է, տալու են իրանց բիւջէի 3%-ը։

Շրջաբերական նամակից յետոյ անցեալ մայիսին ինքն անձամբ շրջելով Հիւսիսային Կովկասի հայաբնակ քաղաքները և դպրոցական իրականութեան հետ ծանօթանալով, սրբազանը շեշտում էր, որ միւս ուսումնական տարուն Աստրախանի թեմն էլ կունենայ թեմական տեսուչ։

Թեմական խորհուրդ ունենալուն սրբազանը դէմ չէր։ Բայց քանի որ Աստրախանի թեմը, թիւրիմացութեամբ թէ հանգամանքների բերմամբ, տարածվում է Վլադիկավկազից մինչև Վլադիվօստոկ, ուստի այդ լայնածաւալութիւնից բղխած տեխնիքական անյարմարութեանը պիտի զոհել «թեմական խորհրդի» սկզբունքը և Աստրախանի «թեմական դպրոցի» հոգաբարձութեանը տալ և թեմական խորհրդի իրաւունքներ։ Այդ հոգաբարձութիւնը առաջնորդի հետ միասին ընտրելու է թեմական տեսուչ կամ տեսուչներ։

Թողնելով մի կողմ թեմական խորհուրդ ունենալու կամ չունենալու սկզբունքային մասը, աչքի առաջ ունենալով թեմական տեսուչներ ունենալու անհրաժեշտութիւնը, զարմանում ենք, որ Աստրախանի առաջնորդը ընթացք չէ տալիս գործին։

Գոնէ մինչև օրս լրագիրներում Աստրախանի թեմի համար թեմական տեսուչներ հրաւիրելու յայտարարութեան բացակայութիւնը մեզ իրաւունք է տալիս կարծելու, որ այդ ուղղութեամբ վերջնական որոշում չէ կայացած։

Մօտենում է ուսումնական տարին, հրատարակվել է պարտադիր ծրագիր, որը բազմաթիւ թիւրիմացութիւններ է առաջացնելու թէ մանկավարժական խմբերում և թէ հոգաբարձական - մանկավարժական խառն ժողովներում՝ իր աններևակայելի ծաւալով։ Պէտք է լինի մի վերահասու մարմին, որ եթէ ոչ բոլորովին, գոնէ մասամբ կարողանայ հարթել դպրոցներում առաջանալիք խառնափնթորութիւնը։ Անհրաժեշտ է այդ մասին մտածել՝ քանի դեռ ժամանակ կայ։ Ս. Խ—ն

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Երևան, 1 օգոստոսի

Երևանի ս. Պետրոս և Պօղոս եկեղեցում այժմ 5 քահանայ կայ. սրանցից մէկն է Սիմէօն ք. Բաբայեանցը, որը եղել է երբեմն քաղաքի բանտի դուռը փակող և բաց անող և տգէտ ժողովրդի ընտրելով քահանայ է դառնում։ Այս եկեղեցու ժողովրդից մէկն եմ ես. ամեն ժամանակ և աւելի շատ տօն օրերում՝ գնում եմ եկեղեցի, իսկ քահանան ամիսը 6—7 անգամ հազիւ է եկեղեցի գալիս, այն էլ ժամերգութեան կիսին կամ վերջին գալիս, խորան է մտնում և սակաւ է դասը կանգնում. յաճախ էլ կոնծած. լոյսը բացվելիս մէյդան է գնում, փայտը ձեռին պտտում, ցոյցեր է անում, խրատներ է կարդում միրգ ծախողներին։ Ժողովուրդ

—

Օրդուբաթ, 4 օգոստոսի

«Մշակի» № 158-ում յիշել էի, որ տեղիս բացվելիք ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը դիմել է մեր ընկերութիւններին օժանդակելու։ Բայց մինչև օրս պատասխան չը կայ։ Եւ դպրոցի կարիքը այն աստիճան զգալի է դարձել, որ երէկ ծխատէր ժողովուրդը հաւաքվեց խորհրդակցելու այդ մասին։

Ճիշդ է, ամբողջը ներկայ չէին, բայց ժողովը օրինաւոր ճանաչվեց ներկայ եղողներից և անցաւ օրակարգին։

Թեր և դէմ կարծիքներից յետոյ գրվեց մի հասարակական համախօսական, որին ստորագրողները աշակերտական թոշակների և մասնաւոր սուէրների հետ միասին պարտաւորվեցին 200 ր. վճարել դպրոցին։

Եւ հոգաբարձութիւնը շուտով առանձին խնդրով, հասարակութեան համախօսականի հետ միասին, դիմելու է կրկին Կ. Հ. Բ. Ընկերութեանը, որպէսզի սա՝ որևէ գումարով օգնէ իրանց՝ մի ուսուցիչ ունենալու։

Յոյս կայ, որ Ընկերութիւնը չի մերժի խնդրված օժանդակութիւնը։

«Մշակի» № 164-ում կարդացինք, որ Կ. Աղամեանցը, կատարելով իր հօր խոստումը, նուիրում է տեղիս եկեղեցուն մի այգի, որի արդիւնքը պիտի գործադրվի դպրոցի օգտին։ Գովասանքի արժանի է երիտասարդի այդպիսի վարմունքը, բայց յօդուածագիրը աւելացնում է, որ այդ այգին հոգաբարձութիւնը «ուսումնարանի համար մի անսպառ աղբիւր դարձնի»։ Այդ առիթով կասէինք, որ այդ միայն ապագայի հարց է, իսկ առայժմ, անմշակ լինելու պատճառով, անցեալ տարի տուել է 8 ր., իսկ այս տարի 12 ր., որը և գործադրվել է իր՝ այգու վրա։

Ուրեմն այգու յոյսով մնալ՝ նշանակում է ժողովրդի պարանոցից մի մեծ քար կախ տալ և գլորել ծովի խորքը։ Արշալոյս Տէր-Յովհաննեան

—

Սղնախ, 6 օգոստոսի

Անցեալները հաղորդել էինք, որ Կարաբէկովը սպառնում է դատարկել տալ հայոց դպրոցի շինութիւնը, եթէ հոգաբարձութիւնը չը վճարի նրան 2000 ր.։ Այս գործի առիթով Կարաբէկովը բողոքել էր կօնսիստորիային և պահանջել, որ իր շինութիւնը վերադարձնեն իրան, քանի որ հոգաբարձութիւնը չարչարում է և չէ տալիս նրան շինութեան գինը, մինչդեռ այդ պէտք է տար նրան երեք տարի առաջ։

Այդ բողոքի հիման վրա կօնսիստօրիան առաջարկեց գործակալին փակել դպրոցը և առնել հոգաբարձուների ձեռքից, եթէ նրանք անյապաղ չը կատարեն տանուտիրոջ պահանջը։ Այսպիսի կտրուկ կարգադրութիւնը իրարանցում առաջ բերեց անփոյթ հոգաբարձուների մէջ։ Սկսվեց աղմուկ։ Ի՞նչ անել։ Փող չունէին և ժողովուրդն էլ մի կօպէկ չէր տայ։ Ո՞րտեղից ճարել 2000 ր. և կատարել Կարաբէկովի խիստ պահանջը։ Մնում էր, որ դատարկէին շինութիւնը և յանձնէին Կարաբէկովին, կորցնելով և տուած 1000 րուբլին։

Այսպիսի շատ ծանր ժամանակ դպրոցին օգնութեան հասաւ Արտեմ Օթարեանը, որ իր բարեգործութեամբ յայտնի է Ցարսկիէ-Կոլօդցիում, որտեղ շինել է դպրոցական գեղեցիկ շինութիւն և պահպանել է այն իր հաշւով երեք տարի 1893—1896 թ.։ Օթարեանը համաձայնվեց տալ դպրոցին փոխարինաբար հարկաւոր գումարը՝ առանց տոկոսի՝ Կարաբէկովի պարտքը վճարելու համար։ Հոգաբարձութիւնը տուեց իր կողմից 700 ր., իսկ մնացած 1300 րուբլին պէտք է տայ Օթարեանը։

Օթարեանին պարտքը պէտք է տրվի Լիանոզեանի կալուածքից, որը պատկանում է հայոց դպրոցին։ Այդ շինութիւնը տարեկան բերում է 750 ր., և դրանով է գլխաւորապէս պահպանվում հայոց դպրոցը. ուրեմն մօտ երկու տարի ոչինչ այլ ևս չի ստացվի նրանից։ Եւ ուսումնարանը կընկնի շատ նեղ դրութեան մէջ, ուսուցիչները սոված կը մնան, եթէ հասարակութիւնը չօգնի դպրոցին։ N. N.

—

Տաշկենտ, 26 յուլիսի

Չը նայած որ երէկ մեծ տօն էր, բայց մօտ 300 տուն հայերից տեղիս աղօթատուն էին եկել միայն 8—10 հոգի։ Պատարագից յետոյ ծխատէր քահանան կարդաց Վեհափառ Հայրապետի կոնդակը, որի բովանդակութիւնը շատ մօտիկ է տեղիս հայ գաղութին։ Օրինակ՝ մի քանի տեղերում եկեղեցական կանոններից դուրս գործեր են բռնում, եկեղեցին դարձնում են թատերասրահ։ Նման մի անկարգութիւն էլ մեզ մօտ է եղել. ուրբաթ-ուրբաթ գիշերը տեղիս աղօթատանը մի քանի երիտասարդներ սոխեր էին շպրտում սրա-նրա վրա և մի քանի անպատիւ խօսքեր ասում։

Մի քանի օր առաջ տեղիս աղօթատանը պսակ կար։ Այդ պսակի ժամանակ ներս է մտնում մի պարոն և գէս ու գէն նայելուց յետոյ դիմում է քահանային ասելով.

— Տէր տէր, չը պրծա՞ր. շուտ արա, էլի։

Պսակադրութեան այդ արարողութեանը եկեղեցում ներկայ էին մի քանի օտարազգիներ, որոնք երևի հետաքրքրվել էին տեսնելու հայկական պսակը։ Այդ պարոնի յանկարծ ներս մտնելը և բղաւելը զարմացրեց ներկայ եղող օտարներին, որոնք զարմացած նայում էին յանդուգն երիտասարդին։ Այդ ժամանակ մարդիկ մօտենալով հանգստացրին և առաջարկեցին այդ անձին, որ գլխարկը վերցնի, բայց նա պատասխանեց.

— Ոչ, ժամ է որ գլխարկ վերցնեմ։

Ապա նա յանդգնեց գրպանից հանել սիգարը և վառած մոմի վրա վառել։ Այդ վերջին հանգամանքը ներկայ եղող օտարազգիների զարմանքը փոխեց վատ տպաւորութեան, և նրանք թողեցին աղօթատունն ու հեռացան։

Բացի վերև յիշածս անկարգութիւնները՝ անպակաս չեն մեր եկեղեցում և այլ անկարգութիւններ. օրինակ՝ ուրիշների սպիտակ գլխարկների վրա թանաք ածել և այլն։

Կարելի է ասել, որ տեղիս հայերը գինետներում իրանց աւելի կարգին են պահում, քան թէ աղօթատանը. գինետներում գլուխները տաքացնում են և ազգի կենացն են խմում, իսկ եկեղեցում ազգին խայտառակում։

Տեղիս ծխ. ուսումնարանը արդէն բացվելու մօտ է, բայց ուսուցչի համար մինչև այժմս մտածող չը կայ. թէ ինչ են մտածում տեղիս հոգաբարձուները, յայտնի չէ։

Տեղիս հայ գաղութի երիտասարդներին կարելի է բաժանել երկու կատեգորիայի։ Առաջին տեսակին են պատկանում միշտ մութ ու խոր սենեակներում թուղթ խաղացողները, մանաւանդ տօն օրերին, շաբաթ գիշերվանից մինչև ուշ կիրակի գիշե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի՞ՆՉ Է ՍԷՐԸ

(Կնուտ Համսունից)

—

Ի՞նչ է սէրը։ Դա հովիկ է, որ սուլում է վարդերի վրայով. ոչ, դա էլեկտրական կայծն է արեան մէջ։ Սէրը դժոխքի բոցավառ երաժշտութիւնն է, որ պարել է հարկադրում ծերունիների սրտերն անգամ։ Դա մարգարիտկա է, որ գիշերվան շնչի տակ լայնօրէն փռում է իր թերթիկները. դա անեմօնա է, որ փակվում է թեթև շնչից ու մեռնում հպումից։

Այդպէս է սէրը։

Նա կարող է խորտակել, բարձրացնել և նորից ամօթով դրոշմել մարդուն. այսօր նա սիրում է ինձ, վաղը քեզ, իսկ միւս գիշեր նրան. այդպէս անկայուն է նա։ Բայց և ամրապինդ է նոյնպէս՝ իսկ և իսկ անխորտակելի ժայռի նման, ու վառվում է անշիջանելի բոցով ցմահ, որովհետև սէրը յաւերժական է։ Ի՞նչ է ուրեմն սէրը։

Օ՜, սէրը ամռան գիշերն է՝ աստղերով զարդարուն երկնքով ու անուշաբոյր երկրով։ Ապա ինչո՞ւ է նա ստիպում պատանուն զարտուղի արահետներով շրջագայելու, ապա ինչո՞ւ է հարկադրում ծերունուն միայնօրէն տանջվելու իր սենեակի մէջ։ Ա՜խ, սէրը փոխակերպում է մարդկային սիրտը շքեղ, անծանօթ պարտէզի, ուր բուսնում են խորհրդաւոր, անպատկառ սունկերը։

Մեթէ նա չէ հարկադրում վանականին օտար պարտէզներ մտնել գաղտնի և դիտել գիշերով ննջողներին լուսամուտից։ Մեթէ նա չէ խելակորոյս դարձնում կոյսերին և ազնուհիների խոհականութիւնը պղտորում։ Նա ստիպում է արքային գլուխ խոնարհել մինչև գետին՝ մազերը ճամբու փոշին սրբելու չափ, բերան բանալ անամօթ խօսքեր քրթմնջելու, և նա ծիծաղում է և լեզուն ծամծմում։

Այդպէս է սէրը։

Ո՛չ, ոչ. նա այլ բան է. նա նման չէ ոչ մի բանի աշխարհի երեսին։ Նա իջաւ գարնան գիշերին, երբ պատանին տեսաւ երկու աչքեր... երկու աչքեր։ Նա խորը դիտեց և այլ ևս չը կարողացաւ հայեացքը դարձնել։ Նա համբուրեց շրթունքները և նրան թւաց, որ նրա սրտում իրար դէմ առան երկու ճառագայթներ. արևն ու աստղը հանդէպ առ հանդէպ լուսաւորում էին միմեանց։ Նա գիրկն ընկաւ ու այլ ևս չը տեսաւ, ու այլ ևս չը լսեց ոչինչ աշխարհում։

Սէրը՝ դա անդրանիկ բառն է, որ արտասանել է Աստուած, առաջին միտքը, որ լուսաւորել է Նրան։ Երբ Նա արտասանեց՝ «Եղիցի լոյս», երևաց սէրը։ Եւ բոլորը, ինչ որ նա ստեղծեց, այնպէս գեղանի էր, որ նա ոչինչ չէր ուզում փոփոխել։ Ու սէրը նախաղբիւրն է կեանքի և նրա տիրապետը. սակայն բոլոր ճամբաները նրա՝ ծաղիկներով և արիւնով են ծածկված, արիւնով և ծաղիկներով... Ա. Տ.

ՀՍԿԱՅ

(Լէօնիդ Անդրէևից)

—

«... Ահա, գալիս է հսկան, մեծ, չափից դուրս մեծ հսկան։ Այնպէ՜ս մեծ, այնպէ՜ս մեծ։ Ահա գալիս է նա, ահա գալիս է...։ Ծիծաղելի մի հսկայ։ Ձեռները հաստ են ու ահագին, մատները ցցած, իսկ ոտները նոյնպէս ահագին, նոյնպէս հաստ, հաստ՝ ծառի պէս հաստ։ Ահա գալիս է... ու վայր ընկնում։ Հասկանո՞ւմ ես, գալիս է ու վայր ընկնում։ Ոտքը աստիճանին է դիպչում ու վայր ընկնում։ Որքա՜ն յիմար, որքա՜ն ծիծաղելի հսկայ. ոտքը աստիճանին է դիպչում ու վայր ընկնում։ Բերանը բացել է ու պառկել, բերանը բացել է ու պառկել, ծխնելոյզ մաքրողի պէս՝ ծիծաղելի է դարձել։ Դու ինչո՞ւ համար ես եկել այստեղ, հսկայ. հեռացի՛ր դու, հեռացի՛ր դու այստեղից։ Դոդիկը այնպէս սիրուն է, Դոդիկը այնպէս լա՜ւ է, լա՜ւ է, նա այնպէս լաւ իր մօր կրծքին է սեղմվել, նրա սրտի՜ն, նրա սրտի՜ն... Նա այնպէս սիրո՜ւն է, նա այնպէս լա՜ւ է։ Նրա աչիկները լաւ են ու սիրուն, մաքուր են ու պայծառ... ու բոլորը նրան այնպէ՜ս են սիրում։ Նրա քթիկն էլ է լաւ, նրա շրթունքներն էլ են լաւ ու նա չարութիւն չէ անում։ Այդ առաջ էր չարութիւն անում, գոռում-գոչում, ձի քշում։ Գիտե՞ս, հսկայ Դոդիկը ձի ունի, լաւ ձի, մեծ ու պոչով ձի։ Նա նստում է նրա վրա ու քշում հեռո՜ւ, հեռո՜ւ, դէպի գետակն է գնում, դէպի անտառն է գնում։ Իսկ գետակի մէջ ձկնիկներ կան. գիտե՞ս, հսկայ, թէ ինչ տեսակ ձկնիկներ կան այնտեղ։

«Ո՛չ, դու չը գիտես, դու յիմար ես. Դոդիկը միայն գիտէ, թէ ձկնիկներն այնպէս փոքրի՜կ, այնպէս լա՜ւ են։ Ջրի երեսին արևն է շողշողում, իսկ ներքև ձկնիկներն են խաղում՝ փոքրիկ, սիրուն ու շարժուն։ Այո՛, յիմար հսկայ, դու այդ չը գիտես... Որքա՜ն յիմար, որքա՜ն ծիծաղելի հսկայ. գալիս, վայր է ընկնում։ Բարձրանում էր աստիճաններով՝ մէկ, երկու՝ ոտքը աստիճանին է դիպչում ու վայր ընկնում։ Որքա՜ն յիմա՜ր, որքա՜ն ծիծաղելի հսկայ։ Իսկ դու ինչո՞ւ համար ես գալիս մեզ մօտ, քեզ ոչ ոք չէ կանչել, յիմա՜ր հսկայ։ Այդ առաջ էր Դոդիկը չարութիւն անում, այժմ նա խելօք է ու սիրուն, ու մայրիկը նրան այնպէս քնքո՜յշ, քնքո՜յշ է սիրում։ Այդպէս է նա սիրում. բոլորի՜ց էլ շատ, իրանի՜ց էլ շատ, կեանքի՜ց էլ շատ։ Նա՛ է նրա արևը, նա՛ է նրա երջանկութիւնը, նա՛ է նրա ուրախութիւնը։ Ա՛յ, այժմ նա փոքրիկ է, շա՜տ փոքրիկ. նրա կեանքն էլ է փոքրիկ, բայց յետոյ նա կաճի ու կը դառնայ հսկայի պէս մեծ. նա կունենայ մեծ միրուք ու մեծ-մեծ բեխեր. ու նրա կեանքը կը լինի մեծ, պայծառ ու գեղեցիկ։ Նա կը լինի խելօք, նա կը լինի բարի, նա կը լինի ուժեղ, հսկայի պէս ուժեղ. բոլորը կը սիրեն նրան, բոլորը կը նայեն նրան ու բոլորը նրանով կը հրճվեն։ Նրա կեանքում էլ կը լինի վիշտ. բոլոր մարդիկ վիշտ ունեն. բայց կը լինեն և ուրախ օրեր, արևի պէս պայծառ օրեր։ Ու նա այդպէս աշխարհ կը մտնի՝ խելօք ու գեղեցիկ. կապոյտ երկինքը կը ժպտայ նրան, թռչունները կերգեն իրանց երգերը և ջուրը անուշ կը խօսի։ Նա կը նայի իր շուրջն ու կասի. «Ինչպէս լա՜ւ է աշխարհս, ինչպէս լա՜ւ է աշխարհս»...

«Ա՛յ... այ... այ... Ո՛չ, չէ կարող պատահել։ Զգո՞ր իմ բալէն ամուր ու քնքոյշ, ամուր ու քնքոյշ կրծքիս եմ սեղմել։ Բալիկս, դու չե՞ս վախենում այստեղի մութից։ Տես, պատուհաններում լոյս է երևում։ Փողոցի լապտերն է այդ՝ կանգնած լուսաւորում. որքա՜ն ծիծաղելի է նա։ Մի քիչ էլ այստեղ լուսաւորեց, այնպիսի՜ լաւ լապտեր է։ Ասաց ինքն իրան. «Թող մի քիչ էլ այնտեղ լուսաւորեմ, ապա թէ ոչ այնտեղ այնպէս մութ է, մութն է»։ Երկա՜ր, ծիծաղելի՜ լապտեր։ Վաղն էլ պիտի լուսաւորի, վաղն էլ, Աստուած իմ, վաղն էլ...

«Այո՛, այո՛, հսկայ։ Ի հարկէ, ի հարկէ։ Այնպէս մեծ, մեծ հսկայ։ Լապտերից էլ մեծ, զանգակատնից էլ մեծ, բայց և ծիծաղելի. գալիս, վայր է ընկնում։ Ախ, յիմար հսկայ, ինչպէս չը նկատեցիր աստիճանները։ «Ես վերև էի նայում, ներքև ես չեմ տեսնում»,—ասում է հսկան խոր ու հաստ, հասկանո՞ւմ ես, խոր ու հաստ ձայնով։ Ես վերև էի նայո՜ւմ։ Իսկ դու աւելի լաւ կանես ներքև նայես, յիմար հսկայ, այն ժամանակ կը տեսնես։ Ա՛յ իմ սիրունիկ Դոդիկը, խելօք ու սիրունիկ Դոդիկը, շուտով նա կաճի ու քեզանից էլ կը բարձրանայ։ Նա կը քայլէ այսպէ՜ս քաղաքների միջով, անտառների միջով, սարերի վրայով։ Նա կը լինի համարձակ, նա կը լինի ուժեղ ու ոչ մի բանից նա չի վախենայ։ Ա՛յ, մօտեցաւ գետակին ու ցատկեց։ Բոլորը ապշած նրան են նայում, իսկ նա կանգնում՝ միւս ափն է ցատկում։ Նրա կեանքը կը լինի մեծ, պայծառ ու գեղեցիկ, և արևը, սիրուն ու հայրենի, կը փայլէ միշտ։ Դուրս կը գայ առաւօտեան ու կը փայլէ... Աստուած իմ... այնպէ՜ս սիրուն...

«Ա՛յ, այ... մօտեցաւ... մօտեցաւ ու վայր ընկաւ։ Ծիծաղելի՜, ծիծաղելի՜... Որքա՜ն ծիծաղելի...»։

Այդպէս էր խօսում մայրը, կէս գիշերին, իր մեռնող երեխայի հետ։ Ման էր ածում մութ սենեակում ու խօսում. լապտերը պատուհանն էր լուսաւորում, իսկ հարևան սենեակում հայրը նստած՝ լուռ լալիս էր ու լալիս։ Վիկտոր Մանուէլեան ըը․ այդ Թղթամոլները պատկանում են ինտելիգենտ դասին։ Իսկ երկրորդ կատեգորիային պատկանում են հասարակ բանւորները, որոնք ստանում են ամսական 30—40 ր․ կամ աւելի և իսկապէս դրանք վաղ առաւօտվանից մինչև երեկոյ արիւն-քրտինքով աշխատում են և ամբողջ ամիսը կերակրւում են սոխ ու սև հացով, ամսվայ ռոճիկները հաւաքում են և միանգամից ստանում։ Իսկ ինչ են անում այդ արիւն-քրտինքով աշխատած 30—40 րուբլին։ Ցաւալի է ասել, որ միայն մի օրվայ մէջ ուտում են այդ փողը՝ խումբ-խումբ հաւաքվելով գինետներում։ Իսկ այդպիսիներն արդեօք մտածում են իրանց հարազատների մասին, որոնք հայրենի գիւղերում իրանց կարօտն են քաշում և իրանց ձեռքին մնում յաճախ։ Գ․ Մղերարեան

ԱՄՕԹ Է

Ախալցխա, 3 օգոստոսի

Ամսիս 2-ին ծուղրուտցիների կրօնական զգացմունքի խնդիրը «Եօթն-Վէրաց» պատկերը բերել էր Ծուղրուտ գիւղը։ Անձնական գործով նոյն օրը և ես գտնվեցի նոյն գիւղում։ Գիւղը ստացել էր տօնական կերպարանք։ Չը նայելով որ կալոցի ամենաճըգնաժամն է, բայց 110—120 տնից բաղկացած գիւղում, այդ օրը, ոչ ոք չէր աշխատում կալում։ Հաշւելով իւրաքանչիւր ընտանիքի մարդու և եզան օրավարձը 3-ական ր․, այդ օրը գիւղը կորցրեց 360 ր․ ի պատիւ պատկերի։

Հէնց որ քաղաքի ճանապարհին երևացին պատկերակիր կառքերը, սրտաճմլիկ էր տեսնել թէ տղամարդիկ և կանայք, ծերունիներն ու մանուկները ինչպէս բոկոտն ու լալով վազում էին դիմաւորելու պատկերին։ Գիւղ մտնելուն պէս եկեղեցական Թափօրը՝ սկսվեց սրտաճմլիկ տեսարանը։

Սիրտ պէտք էր, որ դիմանար․ մարդուս աչքերն էին կարասվում, երբ տեսնում էր, թէ հիւծված, ոտները Թուլացած հիւանդի կների տակն անցած ազգականները ինչպէս էին շտապեցնում մօտենալու պատկերին․ խեղճերը իւրաքանչիւր շարժումից ուշաթափվում էին։ Որքան քարասիրտ մարդ պէտք է լինէր, որ չարտասվէր ծնողների գրկում մեռելանման գլուխ ու ձեռները քաշ արած, նոր անկողնից հանած հիւանդ մանուկներին, որոնք հազիւ էին կարողանում բարձրացնել գլուխները՝ գոնեա շրթունքները մօտեցնելու պատկերին։

Թափօրը հասաւ եկեղեցի և պատկերը դրվեց բակում պատրաստված սեղանի վրա, ու սկսեցին առատ անձրևի նման տեղալ դրամեղէն, ոսկեղէն և շորեղէն նուէրները։ Սա կարծես դեռ չէր բաւական, պատկերի մօտ ածող քահանաներից մէկը շուտ-շուտ սկսեց կրկնել․ «Դէհ, Աստուած ձեզ մէկին հազար տայ, համեցէք ոչխար, գառ, ուլ նուէր գրվեցէք»։ Իսկ միւս քահանան սեղանի վրա, զանազան գոյնի ժապաւէններով և Թելերով, Թիթեղից շինած ձեռքերի, ոտքերի, աչքերի ու սրտերի փաթթոցը բաց անելով հրաւէր կարդաց ժողովրդին․ «Դէհ, համեցէք, գնեցէք ձեռք, ոտք, աչք, սիրտ»։ Ծիծաղս փրթկեց, յիշեցի չարչի հրէաներին, որոնք փողոցից փողոց անցնելով կանչում են․ «Թել, ասեղ, կոճակ, սապօն, սանր…»։

Ուխտը վերջացաւ։ Քահանաները հրաւիրվեցին ճաշի․ որքան լսեցի, ճոխ սեղան են ունեցել։ Տեղեկացայ, որ պատկերը խնդրող ծուղրուտցի պարոնները, յանուն 10 րուբ․ կառավարձի (պատկերը բերող), ամբողջ գիշերը, տնէ տուն ման գալով, ժողովրդից դրամ են հաւաքել և սեղանը պատրաստել են ի հաշիւ այդ հաւաքական փողի ու քահանաների հետ սեղանակցելու իրաւունքը իրանց վերապահել, որպէս պատկերը խնդրող ինքնակոչ պատգամաւորներ։ Որովհետև մօտակայ Ծիրա գիւղից էլ պատկերը խնդրող պատգամաւորներ էին եկել, քահանաները շուտ վեր կենալով՝ սեղանը Թողին սեղանակիցներին ու շտապեցին դէպի Ծիրա։

Թող հրապարակի վրա տեսնի ընթերցողը, թէ մեր գիւղերումն էլ երևացել են պարազիտներ, որ յանուն կրօնական սրբութեան կեղեքում են ժողովրդի արիւն-քրտինքով վաստակած կօպէկներն իրանց փորի և որկորի համար։

Լսեցի, որ շրջանային բժիշկը (ազգով վրացի), Ծիրայում տեսնելով ժողովրդի խուռն բազմութիւն խմբված, այսպիսի խօլերայի ժամանակ, զայրացել է և ասել․ «Ամօթ հայերի նման կուլտուրական համարվող ժողովրդին, որ 20-րդ դարում այսպիսի միջոցով միամիտ ժողովրդին են կեղեքում»։ Սա քրիստոնէական կրօնքին հակառակ է և ազգային պատւին ամօթ։

Հայ

«606»-Ը ԽԱՐԿՕՎՈՒՄ

Mens sana in corpore sano.

(Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ)

Նորից ամբողջ բժշկական աշխարհը և նրա հետ համայն մարդկութիւնը կանգնած են մի հանճարեղ գիւտի առաջ, որի փրկարար զօրութիւնը մեծ նշանակութիւն պիտի ունենայ մեր այժմեան հիւանդոտ կեանքի մտաւոր և ֆիզիքական զարգացման մէջ և հնարաւորութիւն պիտի տայ վերջապէս մարդկութեանը ազատվելու մի ահելի և սարսափեցնող Թշնամուց, որ դարեր շարունակ քանդել ու կերել է նրա մարմինը։

Այդ գիւտը հակասիֆիլիսային նոր միջոցն է, «606», որը բացել է Ֆրանկֆուրտի պրօֆ․ Էրլիխը իր տասը տարվայ անընդհատ տոկուն աշխատութեան ընթացքում։ Նա գալիս է բժշկելու մարդկութեանը ամենամեծ չարիքներ պատճառող և ամենահին հիւանդութիւններից մէկը՝ սիֆիլիսը։ Էլեքտրական տօկի պէս, նա անցել է բոլոր քաղաքակրթված երկիրները և ոտքի կանգնեցրել ամբողջ բժշկական գիտնականներին։

Օրերս, մեզ մօտ, տեղային զինւորական հիւանդանոցում, համալսարանի պրօֆէսօր Ս․ Կօրշունը և բժ․ Վ․ Նեդրիգայլօվը առաջին անգամ սկսեցին փորձեր կատարել սիֆիլիսով վարակված մի քանի հիւանդ զինւորների վրա։

Փորձը կատարող բժիշկների ասելով, Էրլիխի միջոցը, առաջին անգամ սրսկելուց յետոյ, աչքի ընկնող փոփոխութիւն է մտցնում սիֆիլիսով հիւանդների օրգանիզմի մէջ։ Հիւանդները առաջուց մեծ ցաւեր են զգում, մանաւանդ սրսկման 4-րդ օրը, իսկ յետոյ ցաւը հետզհետէ մեղմանում է ու յետոյ բոլորովին ոչնչանում։

Բոլոր հիւանդները, որոնց վրա փորձեր են կատարվել, առաջվանից իրանց լաւ և Թեթև են զգում։ Օրինակ՝ մի զինւորի վրա, որի սիֆիլիսը շատ հնացած էր, իսկ ամբողջ մարմինը պատած սիֆիլիսային վէրքերով, սրսկում կատարելուց յետոյ վէրքերը սկսել են կարմրել, իսկ որբոքման պրօցէսը պակասել է։ Այդ դէպքին մասնագէտ բժիշկները մեծ նշանակութիւն են տալիս։

Պրօֆ․ Կօրշունը և բժ․ Նեդրիգայլօվը, Խարկօվին լաւ յայտնի այդ երկու բակտերիօլօգները, պրօֆ․ Էրլիխի աշակերտներն են։ Նրանք դիմել են նամակով իրանց ուսուցչապետին՝ խնդրելով ուղարկել իրանց Էրլիխի միջոցը։ Պրօֆ․ Էրլիխը ուղարկելով իր միջոցից բաւական մեծ քանակութիւն, 80 պորցիա (доза), խնդրում է իր աշակերտներին, որ փորձերը առ այժմ կատարեն միայն կլինիկաներում, որպէս զի հնարաւորութիւն ունենան լուրջ և բազմակողմանի ուսումնասիրել այդ պրեպարատի յատկութիւնները։

Երէկ նորից կատարեցին մի փորձ 10 տարեկան երեխայի վրա, որը հիւանդ է ժառանգական սիֆիլիսով, որպէս զի պարզեն այդ պրեպարատի նշանակութիւնը ժառանգական սիֆիլիտիկների վրա։

Բժիշկների կատարած ուրիշ հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ պրօֆ․ Էրլիխի այդ միջոցը միայն բացառապէս ճշմարիտ է սիֆիլիտիկական սպիրօխիտների համար և որ նա ուրիշ բակտերիաներ չէ սպանում։

Յայտնի պրօֆ․ Զաբօլօտնին, որը գտնվում է այժմ այստեղ և ուղարկված է Պետերբուրգից խօլերային հետազօտութիւններ կատարելու նպատակով, անձամբ ներկայ լինելով փորձերին այն միտքն է յայտնում, որ Էրլիխի այդ միջոցը, անկասկած, պիտի առողջացնի լիւէսով (lues) հիւանդներին։ Ինչ վերաբերում է հին սիֆիլիտիկների առողջացնելուն, այդ դեռ դժուարութիւնների պիտի հանդիպի։

Պրօֆ․ Կօրշունի ասելով՝ հետազօտութիւնները հիւանդների վրա կը շարունակվեն վեց շաբաթ, և այնուհետև ամեն ինչ բոլորովին կը պարզվի։

Ուսան․-բժ․ Յով․ Մ․ Ազատեան

Խարկով, 3 օգոստոսի

ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔ

Կարդալով «Սուրհանդակի» № 143-ում Աստ․ Երիցեանի առաջնորդողում գիւղատնտեսութեան վերաբերեալ յուսահատութիւնը՝ ես միանգամայն զարմացայ, թէ որքան մակերեւութային են նայում գործի վրա և նոյնիսկ այդ բազմաչարչար ստեղծվող գործը վերագրում «ռեկլամային բնոյթ» կրող մի երևոյթի։

Այն՝ որ գիւղում Ջուլհականոցները «ոչ մի օգուտ չը տալին», այլ շատ մեծ օգուտ տալին», կարելի է դատել միայն այլ տեսակէտից, Թողնելով մի կողմը, որ Թելը Թանգ է, դժուար է ստանալ և այլն, Թէ այն գիւղերը, որոնք ոչխար և այծ են պահում, ինչ կարող են անել նրանց ստացած բրդից․ և մենք տեսնում ենք, որ շատ գիւղեր ունեն ոչխար և այծ, և դրանց բուրդը հիանալի կերպով գործածվում են իրանց ընտանեկան հագուստների համար, որ Թէ անխառն է, Թէ ամուր և Թէ շատ էժան, քան շուկայից ստացվածը։

Ինքս գտնվում էի մի գիւղում, որտեղ գլուխ էր կանգնած այդ գործին, և ես տեսայ, Թէ ինչպէս տեղացիք սաստիկ ուրախ էին Ջուլհակութեան վերահաստատութեան։ Ինձ պատմում էին, որ մի 40—50 տարի սրանից առաջ, երբ իրանք էին պատրաստում իրանց կտորները, նրանք շատ դիմացկուն և մաքուր ապրանք ունէին իրանց հագուստի համար, իսկ յետոյ, երբ նոր երկրում Թողին իրանց արհեստը, ծախսն աւելացաւ և ապրանքը վատացաւ․ այժմ գոնէ իրանց կանայք և աղջիկները ձմեռը այդ գործով զբաղվելով մեծ օգուտ կը տան իրանց ընտանեկան ծախսերին։

Նրանք առանձին ցանկութիւն էլ չունեն, որ մեծ մրցումներ անեն շուկայի հետ․ նրանք բաւական են, եթէ իրանց որդին օրական մի երկու շահի էլ աշխատի, միայն պարապ չը նստի, իսկ այդքանի համար որքան էլ Թելը Թանգ լինի, էլի նա օրական 20 կ․ աշխատանք ունի։

Ուրեմն շատ սխալ է այն կարծիքը, Թէ «ժամավաճառութիւն է», այլ միակ պակասութիւնը վաճառքի շուկայ ստեղծելն է, որի համար և ձեռնհաս անձինք աշխատում են։

Այժմ գանք երկրորդ կէտին, Թէ «դասախօսութիւններն էլ ռեկլամային բնոյթ ունեն»․ դա նոյնքան սխալ կարծիք է, ինչպէս և առաջինը, կասեմ էլի փորձից։

Մինչև մեր գիւղ գնալը ոչ մի դասախօսութիւն տեղի չէ ունեցել, և ոչ մի ինտելիգենտ ճիգ չէ արել այնտեղ գոնէ անդրջրհեղեղեան գութանները նորի փոխարինելու․ բայց մեր մի քանի անգամվայ խօսակցութեամբ կարողացանք հաւատ ներշնչել, և նոր ձևի գութանները արդէն ստացվում էին մէկը միւսի ետևից ոչ Թէ միայն այդ գիւղում, այլ և շրջակայ գիւղօրայքը՝ տեսնելով նոր գութանի առաւելութիւնը՝ սկսեցին իրանք ևս, և հայ և Թուրք, բերել տալ, նոյն իսկ ընկերութիւն կազմվեց գութաններ սպառելու համար։

Եւ այդպէս՝ դասախօսութիւնը ոչ Թէ հետևանք չունի, այլ անհրաժեշտ է, և եթէ կարելի լինէր ամեն ամառ ուղարկել բոլոր շրջանները ինստրուկտօր-դասախօսներ, մենք մի քանի տարի աւելի առաջ կերթայինք։

Բայց Երիցեանն ասում է, որ չը կան գիւղատնտեսներ, իսկ եղածներին էլ «չենք հաւատում, որ եթէ սրանք գիւղը գնային և այնտեղ դրամական օգնութեան կոչեր միայն ուղարկէին քաղաքները, գիւղական տնտեսական կեանքի մէջ որևէ բան փոխվէր․ սակայն այս էլ կայ, որ եթէ սրանք իսկապէս գիւղ մտնէին և այնտեղ գործէին, Թերևս մի փոփոխութիւն կատարվէր»։

Գիւղատնտեսներ կան և ուրախութեամբ կերթան, բայց ճշմարիտ է այն, «Թէ շնորհիւ միշտ տուած գրօշանոց նպաստների մենք իսպառ փչացրել ենք, ես կասեմ ոչ Թէ մեր գիւղացիութեան, այլ գիւղատնտեսութիւնը»։

Այո, պարոններ, կան գիւղատնտեսներ և կայ գիւղատնտեսութիւն ամենալայն մտօք, միայն հարկաւոր է, որ փափուկ տեղները նստած կաբինետային այն իդէալիստները, որոնք քաղցր խօսքեր շռայլելով են ուզում երիտասարդութիւնը «դէպի գիւղ» քարշել, աւելի լաւ է իրանց առատ նիւթականով վարձատրեն նրանց և գործին, որ կարելի լինի գործ առաջ տանել, և ոչ Թէ գրօշներ Թոշակ տան և դատարկ ձեռքով գործի հրաւիրեն․ այդ դէպքում ոչ մի ինտելիգենտ, նոյն իսկ գիւղից դուրս եկածը չի գնայ, քանի որ նա զրկված կը լինի այնտեղ և՛ նիւթապէս և՛ բարոյապէս։

Օլգա Գենջեան

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Օգոստոսն է․ ուսումնական տարվայ նախադուռ ամիսը, այն ամիսը՝ երբ ուսանող սերունդը ամառվայ քնից արթնացած՝ դըպրոցն ու դասերն է յիշում և աշխատում պարտաւորութիւնները հոգալ, երբ ուսուցչութիւնը, ապագայ մարդկութեան դաստիարակիչները, կռում կոփում է իր խոփը, որ մատաղ սերնդի մտքի դաշտերը վարէ, նրա անկերտ հոգու շինուածքը կերտէ։

Սակայն, Թէև օգոստոս է և մի 10—15 օր յետոյ պիտի բացվեն եղած դպրոցների դռները, ուր պիտի դիմեն նախորդ աշակերտների հետ և նորերը, բայց տակաւին հայ դպրոցական իրականութեան մէջ տիրում է յուսահատեցուցիչ անորոշութիւն, տակաւին հայ վարժապետը մնացել է մոլոր, անտեղ, անպաշտօն, առանց հրաւիրվելու, և չը գիտէ, Թէ կեանքի հոսանքը այս կարճ ժամանակում ուր անկիւնը պիտի նետէ իրան, իր ամբողջ ընտանիքով։

Սակայն Թէև օգոստոս է և գուցէ կը գան ու կանցնեն շատ օգոստոսներ, ուսումնական տարվայ կարապետներ, բայց մենք դպրոցական կեանքում ոչ մի առաջադիմութիւն չենք արել, մեր սահմանափակ դպրոցների Թիւը ոչնչով չենք աւելացրել։ Դեռ հարիւրաւոր խաւար անկիւններ, անտիրական գիւղեր, անդեկ համայնքներ՝ զրկված են դպրոցից և հազարաւոր երեխաներ դպրոցի կենսատու կաթից…։

Այո, Թէև օգոստոս է, բայց մեր ձեռնհասները՝ ձեռքները ծալած, անտարբերութեամբ խոր քուն են մտած։ Դպրոցն ու աշակերտը, ուսուցչի վիճակը նրանց չէ հետաքրքրում։ Եւ ասօղ, գուցէ կը գան ու կանցնեն դեռ էլի շատ օգոստոսներ, դըպրոցական տարվայ ազդարարներ, բայց մենք չենք ազդվի, մենք չենք զարԹնի․ մեր քունը խորն է, մեր պարտաճանաչութիւնը բութ, գիտակցութիւնը խաւարով և շահամոլութեամբ կաշկանդված և մահաԹոյն անտարբերութեամբ մեր հոգին վարակված։

Կար․ Ղազարեան

ԽՕԼԵՐԱ

◆ Բիւլլէտէն․—Օգոստ․ 7-ի առ․ ժամը 9-ից մինչև օգոստ․ 9-ի առ․ ժամը 9-ը Թիֆլիսում խօլերայով հիւանդացել են 5 հոգի, իսկ խօլերանման հիւանդութեամբ՝ 1 հոգի։ Հիւանդանոցում կային 33 հոգի, աւելացել են 5, առողջացել և դուրս են եկել 6, մեռել են 4, Ներկայումս կան 28 հոգի։

◆ Օգոստոսի 7-ին և 8-ին Թիֆլիսում խօլերային նշաններով հիւանդացել են և ուղարկվել բարակները․ 1) Լիսօգօրսկի նրբափողոցում, № 5 տանը՝ Բագրատ Զումբուրիձէ, 21 տար․ (Զինգերի ընկերութեան մեքենաները վաճառող գործակալ)։ 2) Ժուկօվսկայա փող․ № 11 տանը՝ ինժեներ-գիդրավլիկ, կօլլէժսկի-սօվետնիկ Պաւել Սաֆրօնօվ, 58 տար․։ 3) Բայազէտսկայա փող․ № 6 տանը՝ Ամալիա Կօրախիձէ, 50 տար․։ 4) Պօդգօրնի անցքում, № 2 տանը՝ Օլգա Կօրգանաշվիլի, 17 տար․։ 5) Պօդգօրնայա նրբափողոցում, № 53 տանը՝ ազնուականուհի Բէթէլվան Իսահակօվնա Կիպիանի, 37 տար․։ 6) 2 րդ Պետրօվսկայա միջանցքում, № 15 տանը՝ Սիդենիա Բօսէնօվնա Ջանիաշվիլի։

Հիւանդացածների բնակարանները ախտահանութեան են ենթարկված։

◆ Թիֆլիսի քաղաքային դուման, ինչպէս յայտնի է, խօլերայի դէմ մաքառելու նպատակով 2 ամսվայ համար յատկացրել է 50,000 րուբլի։ Վարչութեան հաշւելով, այդ գումարից մինչև օգոստոսի 6-ը ծախսված է 28,000 րուբլի։

◆ Այսօր, օգոստոսի 10-ին, ցերեկվայ ժամը 2-ին նշանակված է խօլերայի դէմ մաքառող բիւրօյի նիստը, իսկ երեկոյեան ժ․ 8-ին քաղաքային սանիտարական գործադիր յանձնաժողովի խորհրդակցութիւնը, ուր ի միջի այլոց քննվելու է վարչութեան անդամ իշխ․ Ա․ Մ․ Արղութեան-Երկայնաբազուկի յարուցած հարցը, որ քաղաքը պէտք է օգնութեան ձեռք մեկնէ գիւղացիութեան՝ խօլերայի դէմ կռիւ մղելու համար, որովհետև գիւղերում խօլերան հազիւ Թէ դադարի շուտով, և եթէ դադարի էլ, դա կը լինի ժամանակաւոր միայն, գարնանից կարող է վերսկսվել և ներմուծվել նաև Թիֆլիս։

◆ Երևանից մեզ գրում են, որ յուլիսի 28 ից մինչև օգոստոսի 5-ը այդ քաղաքում հիւանդացել են խօլերայով 54 հոգի, իսկ մեռել 34․ օգոստոսի 6-ին հիւանդացել են 12 և մեռել 5։ Ընդամենը մեռնող եղել է 39 հոգի, իսկ մինչև օգոստ․ 6-ը հիւանդացողների ընդհանուր Թիւը եղել է 66։ Այս Թւերը քաղված են պաշտօնական աղբիւրներից։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ներսիսեան դպրոցի նոր շէնքի կառուցման աշխատանքները անցեալ օրվանից վերսկսվել են։

◆ Այսօր Օդեսսա է ուղևորվում, ժանտախտի դէմ մաքառելու միջոցների հետ տեղն ու տեղը ծանօԹանալու նպատակով, քաղաքային ախտահանութեան բժիշկ Տ․ Խարազեանը։

◆ Թիֆլիսի կանանց բարձրագոյն կուրսերում պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից։ Բնագիտական և պատմական - բանասիրական բաժանմունքում քննութիւնների աշնանային սեսիան կը սկսվի սեպտեմբերի 15-ից և կը տևի մինչև հոկտեմբերի 1-ը։

◆ Երկաթուղիների վարչութեան կառավարիչ Կօզիրեվը օգոստոսի 8-ին ուղևորվել է Թիֆլիսից՝ Կարսի և Ջուլֆայի երկաթուղագծերը դիտելու։

◆ Թոքախտի դէմ մաքառող Կովկասեան Ընկերութիւնը Աբասթումանում Թոքախտաւոր հիւանդների համար սանատօրիա հիմնելու նպատակով ներկայումս հաւաքել է արդէն մօտ 50,000 րուբլի։ Առաջիկայ տարվայ ապրիլից ընկերութիւնը կը ձեռնարկի շէնքի կառուցմանը։

◆ Առաջիկայ եռամեակի (1912—1914 Թւի) զեմստվային նախահաշւի մէջ, ագրոնոմ Ա․ Սահակեանի կազմած նախահաշւի համաձայն, մորեխը ոչնչացնելու նպատակի համար յատկացված է տարեկան 29,758 րուբլի ծախք․ այդ գումարի մէջ մտնում է պահեստի ֆօնդի 4000 րուբլին։ Առաջներում նոյն գործի համար տարեկան յատկացվում էր մօտ 40,000 րուբլի։

◆ Օգոստոսի 7-ին, ցերեկվայ ժ․ 4-ին, Սօլօլակի Թաղամասում մի տարօրինակ, խուժանային իրարանցում էր սկսված․ Սէրգիեվսկայա փողոցով վազում էր ինչ-որ մոխրագոյն մի եզ, իսկ նրա ետևից հաւերբաշխի բազմութիւն, որոնց մէջ խոշոր Թիւ էին կազմում մանր-մունր տղաներ։ Ո՞ւմն էր այդ եզը, որտեղից էր փախել, ոչ ոքի յայտնի չէր։ Յայտնի էր այն միայն, որ Դվօրցօվայա փողոցով եզը եկել յայտնվել էր Երևանեան հրապարակի վրա, յանկարծակի յարձակվել էր պահակատեղում կանգնած քաղաքապահի վրա, վայր գլորել, տրորել ու անցել Սօլօլակսկայա փողոցով դէպի վեր։ Սէրգիեվսկայա փողոցի անկիւնում, ամենաբանուկ տեղում, նոյն եզը հարուածեց մի ուրիշ մեծ մարդու,—պատմում էր ականատեսներից մէկը,—տրորեց, արիւնլուայ արեց ու անցաւ Սերգիեվսկայա փողոցով դէպի Բէբուտօվսկայա, ապա Թեքվեց Ռտիշչևսկայա, մտաւ հրդեհաշէջների տան բակը ու, յարձակվելով այնտեղ խաղացող մի խումբ երեխաների վրա, վայր գլորեց մէկին ու ապա վերադարձաւ նոյն ճանապարհով դէպի Սօլօլակսկայա, Սէրգիեվսկայա… Նրան հետևում էր հետաքրքիր ամբոխը, ոստիկաններ, բանւոր-մշակներ, ոմանք գաւազաններով, ոմանք Թոկերով․ բռնել էին ուզում։ Եւ այդպէս մի ժամից աւելի վազվզում էր այդ անասունը քաղաքի փողոցներով, սրան-նրան հարուածում, կոխկրտում, արիւնլուայ անում։ Խօսում էին, որ գժված էր այդ եզը։ Ոմանք էլ հաւաքվել խումբ-խումբ զրուցում՝ էին ու վիճում․ մէկը ասում էր՝ եզ է, միւսը Թէ՝ գոմէշ, «գժված է», «գժված չէ»… Մի խօսքով խօսակցութեան առարկան եզն էր։ Ժամը 5-ին միայն գնդակահար արեց նրան Վէննի շրջերում կանգնած ոստիկան Անդրէյ Կնեազօվը։ Վերջապէս Թէև ուշ՝ հասկացան սակայն, որ աւելի լաւ է մի եզ կորցնել, քան Թողնել, որ մի քանի մարդիկ վընասվեն։

◆ Օգոստոսի 7-ին կալանաւորվեց Նիկօլայ Իվանօվիչ Թորոսօվը, որ մեղադրվում է Ե․ Զիլինգարեանի մագազինից 5000 ր․ արժողութեամբ մետաքսէ ապրանք գողանալու մէջ։

◆ Անդրէեվսկայա փողոցում № 115 տան մէջ ապրող երկաթուղային արհեստանոցի փականագործ Արկադի Լարիօնօվը օգոստոսի 7-ին, արբած դրութեան մէջ, վայր ձգեց իրան իր բնակարանի պատուհանից փողոցի մայթի վրա, ջարդեց աջ ոտը և վէրքեր ստացաւ մարմնի զանազան մասերից։

◆ Մի քանի օր առաջ, Վելիկօկնեաժէսկայա փողոցի վրա գտնվող Նիժէրաձէի գինետունն են մտնում երկու հոգի և գինի են պահանջում խմելու։ Գործակատարը մերժում է կատարել այդ պահանջը։ Այդ ժամանակ նրանցից մէկը սաստիկ հարուած է հասցնում նրա դէմքին։ Դէպքին ներկայ եղող քացախավաճառ Սեդրակ Կիւրանօվը, գործակատարին պաշտպանելու նպատակով, բռնում է հարվածողի ձեռքը։ Վերջինիս ընկերը այդ տեսնելով գրպանից դուրս է հանում երկար դանակը և մխում Սեդրակի բերանը։ Գինետան յաճախորդներից մէկը՝ Վասիլի Մախուաշվիլին օգնութեան է շտապում քացախավաճառին և ուզում է զինաթափ անել չարագործին։ Բայց վերջինս կատաղի ոյժով հարուածում է նրան Թիկունքի մասից և տեղն ու տեղը վայր գլորելով դուրս փախչում։ Ճանապարհին նա հանդիպում է Սարաջէվի գործարանի սայլապանին, որը օղի էր տանում շիշերով․ մի ակնթարթում արկղից դուրս է հանում 4 շիշ օղի և երկուսը դնելով գրպանում՝ երկուսն էլ ձեռքին բռնած շարունակում է փախչել Ռազիեզժայա փողոցով, բայց այդտեղ նրան բռնում է 8-րդ ոստիկանամասի քաղաքապահը։ Վիրաւորված Վասիլի Մախուաշվիլին Միքայէլեան հիւանդանոց ուղարկվելուն պէս մեռնում է, իսկ ծանր կերպով վիրաւորված Սեդրակ Կիւրանօվը, բժշկական օգնութիւն ստանալուց յետոյ, ցանկութիւն յայտնեց գնալ տուն և այնտեղ բժշկվել։

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ օգոստոսի 3-ին ազնուական Եւգէնի Եասօնօվիչ Կովէլաշվիլին և Կսէնիա Վարաքօվան ոստիկանական պաշտօնեաներին վիրաւորանք հասցնելուն համար ենթարկվել են տուգանքի՝ առաջինը 25 րուբլու կամ 10 օրվայ կալանաւորութեան, իսկ երկրորդը 100 րուբլու կամ մի ամսվայ կալանաւորութեան։

◆ Պուշկինեան այգու մօտ աճրդավաճառի համար կառուցվող տախտակէ պաւիլիօնը, քաղաքային վարչութեան որոշմամբ, տեղափոխվելու է Սօլդատսկի բազարի վրա գտնվող Ներսիսեան դպրոցապատկան շուկան։

◆ Թիֆլիսի ոստիկանապետի օգոստոսի 9-ի որոշմամբ 3 օրով զրկվում են քաղաք դուրս գալու և աշխատելու իրաւունքից Ագիշէվ Համիդուլլայի № 44, Կէկէլիա Դաթօյի № 293 և Սէրէնկին Կիրիլլի № 355 կառքերը Թիֆլիսի քաղաքային դումայի կողմից 1908 Թւի դեկտեմբերի 9-ին կառքերի երԹևեկութեան համար սահմանած պարտադիր որոշումների 22-րդ կէտը, որ վերաբերում է սակագներին, խախտելուն համար․ նոյն պարտադիր որոշումների 15-րդ կէտը խախտելուն համար զրկվում են քաղաք դուրս գալու իրաւունքից մի օրով Վասիլի Շիրինի № 191 և Սիմօն Նիկօղօսօվի № 522 կառքերը։

◆ Օգոստոսի 8-ին, Պօգրանիչնայա փողոցի վրա, № 18 տան մօտ, երեկոյեան ժամը 10-ին յանկարծամահ է եղել գերմանահպատակ բանւոր Հենրիխ Ռօբէրտ Էրնստ, 55 տարեկան։ Դիակն ուղարկված է Միքայէլեան հիւանդանոց։

◆ Խուդադօվսկայա փողոցի վրա օգոստոսի 8-ին, երեկոյեան, քաղաքային դպրոցի աշակերտ՝ 12 տարեկան Լաւրէնտի Լուկիչ Տօտաձէն կռւի բռնվելով Սուրամսկայա փողոցում № 11 տան մէջ ապրող Թիֆլիսեցի 14-ամեայ Միխայիլ Սերգէյէվիչ Պաւլօվի հետ՝ գրչահատի մի հարուածով վիրաւորեց վերջինիս փորից։ Վիրաւորվածին ուղարկել են Միքայէլեան հիւանդանոցը։ Մեղադրվող Տօտաձէին XI քաղաքամասի պրիստաւը կալանաւորեց իսկոյն և հարցաքննութիւնից յետոյ պահ տուեց հօրը։

◆ ՇՈՒՇՈՒԻՑ մեզ գրում են օգոստոսի 6-ից․ «Տեղիս կօնսիստօրիայի նախագահ Եղիշէ վ․ Ահարոնեանի միջնորդութեամբ և գաւառապետի Թոյլտուութեամբ, օգոստոսի 1—3-ին կայացան Ղարաբաղի Թեմի ծխ․ դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիների ժողովները, ուր քննութեան առնվեցին դըպրոցների և ուսուցիչների վերաբերեալ մի շարք հարցեր»։

◆ Վրիպակ․ — «Մշակի» № 167-ում տպված «Լրագրական հարցը Շուշում» յօդուածի մէջ մի սխալ է սպրդել։ Թերթի 3-րդ երեսի 2-դ սիւնակի 7-դ տողի վրա է՝ «ни служу, ни тужу», պէտք է լինի՝ «ни слуху, ни духу»:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Կօթի գիւղ (Ղազախի գ.), 5 օգ.

Յուլիսի 31-ին տեղիս աշակերտները, մասնակցութեամբ Թ. Պետրոսեանի և օր. Կ. Ամիրզեանի, ներկայացրին «Խէչօյի Թուղը», «Փաստաբանի մօտ» և «Կրոթ-կրոթ» վօդևիլները:

Ի նկատի ունենալով, որ թատրօնը միանգամայն նորութիւն է մեր գիւղացիների համար, որ շատերը նոյնիսկ աննպաստ կանխակալ կարծիքներ էին կազմել նմանեցնելով զանազան օյինբազութիւնների, ինչպէս ցիրկի, կապիկ պար ածելու և այլն, բարւոք համարվեց նախ քան ներկայացումն սկսելը հասարակութեանը մի գաղափար տալ թատրօնի մասին և բացատրել նրա կրթիչ նշանակութիւնը:

Ներկայացումը սկսվեց ժամը 9-ին: Չը նայած մի շարք տեխնիկական անյարմարութիւններին, ներկայացումը բաւականին աջող անցաւ. գլխաւորապէս աչքի էին ընկնում Պետրոսեանը «Կրոթ-կրոթի» մէջ Աղա Մուրադի դերում, օր. Ամիրզեանը «Փաստաբանի մօտ» պիէսում Մարթա Կատաղեանի դերում, իսկ Ս. Աբովեանը «Խէչօյի Թուղի» մէջ Աղի դերում:

Որպէս առաջին փորձ՝ ներկայացումը տըվեց ձրի: Թատրօնի սրահը և պարտէզը լցված էր երկսեռ հասարակութեամբ, բայց մեր գիւղացիները ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ այստեղ եկան ցոյց տալու, որ իրանց պահել չեն կարող նման տեղերում: Կարգ պահպանողների ջանքերն իզուր անցան. շատերը բեմի տախտակամածն էին քանդում և գլուխը այնտեղից հանում:

Խումբը որոշել է մի շարք պիէսներ դնել յօգուտ կառուցվելիք ամառային բեմի:

Ցանկալի է միւս հայրենակիցների աջակցութիւնը թէ նիւթապէս և թէ բարոյապէս: Ս.

—

Վարդաշէն, 5 օգոստոսի

Ամսիս 1-ին տեղիս ծխ. դպրոցի դահլիճում, նոյն դպրոցի օգտին, տըվեց մի ներկայացում: Սիրողները խաղում էին Յ. Եսայեանի «Սօնայի նշանդրէքը», Վրոյրի «Տիկին եմ, տիկին եմ» վօդևիլը և Ф. Б.-ի «Наслѣдство помогло» պիէսը: Խաղը, բացի «Տիկին եմ, տիկին եմ» վօդևիլից, անցաւ բաւարար: Վերջինիս մէջ շատ աջող էր աւ.-ուսուցիչ Խ. Աւդալբէգեանը և մասամբ տ. Խաչատրեանը: Միայն վերջինս իր մարմնի ճկունութիւնը ի չարը գործադրելով ձևերի կողմից դիմում էր ծայրայեղութիւններին:

Չը նայած մի քանի աննպաստ պայմաններին, ներկայացումը մուտքի կողմից կարելի է շատ աջող համարել: Զուտ արդիւնքը հասնում է 135 րուբլու:

Այս ներկայացումը պարտական ենք գլխաւորապէս աւ.-ուսուցիչ Խ. Աւդալբէգեանի, տ. Խաչատրեանի ու օր. Գէորգեանի ջանքերին: Մանկունի

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մոսկվայի «Ակվարիում» կոչված թատրօնում, վերջերս հասարակութեան ուշադրութիւնն է իր վրա հրաւիրել 10-ամեայ մի աղջիկ, Անջէլիգա Ուչէլինա ազգանունով և «Փոքրիկ Դուզէ» մականունով, որը իր մարմնի զարմանալի շարժումներով, դէմքի բազմատեսակ և զարգացման ծայրայեղութեան հասցրած ժէստիկուլիացիայով և մշակված ձայնով անչափ հիացմունք է առաջ բերում: Նա խաղում է իր հօր հետ միասին, որը առաջնակարգ տրանսֆորմատոր է:

◆ Ռուս դերասան Մ. Դալսկին, վերջերս գաւառական քաղաքներից մէկում խաղում էր «Դև և մարդ» պիէսում: Առաջին գործողութեան սկզբում, երբ նա բեմ դուրս եկաւ, հասարակութեան կողմից չը ծափահարվեց:

Իսկ երրորդ գործողութիւնից յետոյ, երբ սկսեց ծափահարութեամբ բեմ դուրս կոչվել, նա իր փոխարէն դուրս թողեց... իր փոքր շնիկին, որը իր հաչոցով սրահը լցրեց:

◆ Մեռաւ լեհացի յայտնի քանդակագործ Անտօն Պօպէլը:

◆ Վիէննայի մօտերքում գտնվող Խէյլիգէնշտադ կոչված այգում կանգնեցված է հռչակաւոր երաժշտագէտ Բէթհօվէնի վրա մի գեղաքանդակ արձան:

◆ Երաժշտագէտ Ր. Շտրաուսը նորերս իր գրած «Սիլվիա և աստղ» օպերայի համար իբրև հօնօրար ստացաւ 322,000 ֆրանկ, «Սալօմէի» համար 62,500 ֆրանկ, իսկ «Էլէքտրա» կոչված օպերայի համար 127,500 ֆրանկ: Իբրև հեղինակութեան հօնօրար նա տարեկան ստանում է մօտ 124,000 ֆրանկ, իսկ երաժշտական խումբ կառավարելու համար մինչև 300,000 ֆրանկ:

◆ Անուանի դաշնակահար Պադէրևսկին, վերջերս Ամերիկայի քաղաքներից մէկում նուագելիս, փչացրեց բթամատի եղունգը, որպիսի «կորուստի» համար, ապահովագրական այլ և այլ ընկերութիւններից նա ստացաւ մօտ 10,000 րուբլի: Սրանից յետոյ նա ապահովագրեց իր աչքերը, մատները և ոտքերը: Պարուհի Պաւլօվան իր ոտքերը ապահովագրել էր 200,000 րուբլով:

◆ Իր գեղեցկութեամբ հռչակված դերասանուհի Լինա Կավալէրին ամուսնացաւ ամերիկացի միլիօնէր-նկարիչ Շանլէրի հետ: Ամուսնութիւնը կատարվել է ամենայն գաղտնապահութեամբ: Մինչև պսակադրութեան ժամը, Շանլէրը սովորականի նման աշխատելիս է եղել իր արուեստանոցում, որտեղից մտել են նա, ուր և չորս մարդու ներկայութեամբ կատարվել է պսակադրութիւնը, որտեղից ամոլը անցել է Ֆրանսիա:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

Բալախանի, 4 օգոստոսի

Բալախանիի և շրջակաների նաւթարդիւնաբերողների աշխատող հայ թէ բանւորները և թէ արհեստաւորները բացառապէս մեր գիւղացիներն են, որոնք հաւաքվել են տեղս Կովկասի զանազան կողմերից, Թիւրքիայից և Պարսկաստանից: Սրանցից ոմանք կամենալով անարատ պահել իրանց բարոյականութիւնն ու ֆիզիքական առողջութիւնը՝ ուզում են ամուսնանալ: Իբրև պարզամիտ գիւղացիներ, նախապէս հարսանիքի պատրաստութիւն են տեսնում և ապա գալով ծխատէր քահանայի մօտ՝ խնդրում են, որ այս-ինչ օրը գայ և պսակի փեսացուին: Բայց, քահանան երբ բացատրում է, որ ինքը ծխատէրը մինչև որ պսակվողի ծննդավայրի հոգևոր իշխանութեան ներկայացուցչից, այսինքն գործակալից, հոգևոր կառավարութիւնից և կօնսիստորիայից պաշտօնական կնիքով և ստորագրութեամբ վկայական չունենայ, անկարելի է պսակի խորհուրդ կատարել, խեղճ պսակվողը՝ ստիպված՝ կրկնարժէք հեռագրով դիմում է իր գաւառի գործակալին, որպէսզի սա անյապաղ տեղեկութիւն տայ պսակվողի ամուրի լինելու մասին: Բայց, տարաբաղդաբար, մեր գործակալները (խօսքս անխտիր բացառութեանց մասին չէ) կամ շատ անփոյթ են վերաբերվում դէպի այդպիսի կարևոր հեռագիրները և կամ մեծամեծ գումարներ են պահանջում պսակվողի հարազատներից:

Ուստի՝ սրանով ընդմիշտ յայտնում եմ Բալախանիի և շրջակայքի հայ բարեպաշտ ժողովուրդներին, որ ամեն մի պսակվողի համար անպայման պէտք է վաղօրօք վկայական ձեռք բերել իրանց գաւառի գործակալից և կամ հոգևոր կառավարութիւնից և կամ վիճակային կօնսիստորիայից և ապա այդ վկայականը բժշկի տւած վկայականի հետ պէտք է ներկայացնել Բագուի հայոց եկեղեցիների գործակալ Ջալէն վարդապետին: Ահա այսպիսով, թէ աւելորդ ծախսերից ընդմիշտ կազատվեն պսակվողները և թէ անտեղի խոչընդոտներից ազատ կը լինեն:

Բալախանիի և շրջակաների հովիւ՝
Ղազարոս ք. Յովսէփեան

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ մարդատար № 12 գնացքը՝ 2 ժ. 38 ր. ցերեկ., Գանձակ է հասնում 9 ժ. 9 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 20 ր գիշերվայ, Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 16 ր. գիշ., Բալաջարի 8 ժ. 1 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժ. 48 ր. առաւ.: Արագ № 2 գնացքը՝ 8 ժ. 15 ր. առաւ. Գանձակ է հասնում 1 ժ. 28 ր. ցեր., Եւլախ՝ 3 ժ. 6 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 7 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 10 ժ. 8 ր. գիշ., Բագու՝ 10 ժ. 53 ր. գիշ.: Պօստատար № 4 գնացքը՝ 10 ժ. 4 ր. գիշ., Գանձակ է հասնում 4 ժ. 18 ր. գիշ., Եւլախ՝ 6 ժ. 26 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 23 ր. առաւ., Բալաջարի՝ 3 ժ. 9 ր. ցեր., Բագու՝ 4 ժ. 45 ր. ցեր.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար № $^{74}/_{75}$ 12 ժ. 22 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 11 ժ. 21 ր. առ., Էջմիածին կայար.՝ 4 ժ. 49 ր. ցեր., Նախիջևան՝ 10 ժ. 51 ր. գիշ.. Ջուլֆա՝ 12 ժ. 29 ր. գիշ.: Ապրանքատար-մարդատար՝ 4 ժ 15 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 10 ր. գիշ.. Էջմիածին՝ 8 ժ. 38 ր. առաւօտեան, Երեւան՝ 10 ժ. 9 ր. առ.. և սրանից դէնը այլեւս չէ գնում:

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 5՝ 7 ժ. 31 ր՝ երեկ., Միխայլօվօ է հասնում 11 ժ. 45 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 30 ր. առաւ.: Պօստատար № 3՝ 1 ժ. 24 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 5 ժ. 47 ր. երեկ., Բաթում՝ 3 ժ. 25 ր. գիշ.: Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 39 ր. գիշ., Բաթում՝ 10 ժ. 49 ր. առաւօտեան:

ԲՈՐԺՈՄ՝ մարդատար № $^{7}/_{8}$ 8 ժ. 28 ր. առ. Միխայլօվօ է հասնում 12 ժ. 42 ր. ցեր., Բօրժօմ՝ 2 ժ. 3 ր. ցեր.: Մարդատար № $^{9}/_{10}$ 3 ժ. 36 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 7 ժ. 56 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 13 ր. գիշերվայ.

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պօստատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցեր.: Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ.: Մարդատար № 11՝ 6 ժ. 58 ր. առ. (այս գնացքը Բաթում չէ գնում):

ԲԱԹՈՒՄԻՑ՝ արագ № 2 գնացքը՝ 7 ժ. 25 ր. առաւ.: Պօստատար № 4՝ 9 ժ. 4 ր. երեկ.: Մարդատար № 6՝ 11 ժ. 4 ր. առ. (այս գնացքը Բագու չէ գնում):

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար № $^{72}/_{73}$՝ 6 ժ. 8 ր. առաւ.: Մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 33 ր. երեկոյեան:

ԲՈՐԺՈՄԻՑ՝ մարդատար № $^{9}/_{10}$ 8 ժ. 8 ր. երեկ.: Մարդատար № $^{7}/_{8}$ 6 ժ. 28 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—$9^{1}/_{2}$—11 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Ք. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ՁԻԼԲԵՐՇԱՅ—$12^{1}/_{2}$—$1^{1}/_{2}$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$1^{1}/_{2}$—2 ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՁԻԼԲԵՐՇԱՅ—6—$6^{1}/_{2}$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—84

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

Օրէ-օր շատացող պահանջը ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ վերաբերմամբ առիթ է տուել վերջին ժամանակներս երեւան գալու բազմաթիւ փոքրարժէք կեղծիքներ, որոնք առաջարկվում են ՍՊԵՐՄԻՆԻՆ նմանող զանազան անուններով (սպերմատին, սպերմինօլ, սպերմօլ, սեկարօվեան հիւթ, հեղուկ և այլն) և միեւնոյն ժամանակ կեղծողների կողմից առաջարկվում են ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ համահաւասար և նոյնիսկ նրանից բարձր ազդեցութիւն ունեցող դեղ: Կեղծողները յաճախ լինում են այնպիսի մարդիկ, որոնք բժշկականութեան հետ ոչ մի առնչութիւն չունեն, օրինակի համար՝ դեղավաճառ և պարֆիւմէրի խանութներ ունեցողները և այլն: Հասկանալի է, որ այդօրինակ կեղծիքները բժշկականութեան և գիտութեան հետ առհասարակ ոչ մի կապ չունեն, սակայն, որպէսզի գիտական բնաւորութիւն տըված լինի նրանց, կեղծողները իրանց ռեկլամների մէջ բերում են գրականութեան և բժիշկների դիտողութիւնները ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ մասին՝ մոլորութեան մէջ գցելով ոչ միայն հիւանդներին, այլ և պ. պ. բժիշկներին:

Ի նկատի ունենալով այդ, մենք պարտք ենք համարում ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ յիշեալ կեղծիքներից այն անձերին, որոնք օգտվում են ՍՊԵՐՄԻՆԻՑ: Գրականութեան մէջ գտնվող բոլոր բազմաթիւ դիտողութիւնները գիտնականների և բժիշկների կողմից՝ արված ՍՊԵՐՄԻՆԻ բուժիչ ազդեցութեան մասին, այն է՝ նևրաստենիայի, սրտական թուլութեան, ծերութեան, իստերիայի, նևրալգիայի, արեան պակասութեան, թոքախտի, սիֆիլիսի, սնդիկային թունաւորութեան հետեւանքների, սեռական հիւանդութիւնների (չզօրութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բաբախումն, պէրէբօյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացման, ալկօհօլիզմի, ողնաշարի հիւանդութեան, կաթուածների, հիւանդութիւններից թուլացած լինելու, յղացածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ— վերաբերում են ԲԱՑԱՌԱՊԷՍ ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, հետեւաբար և խնդրում ենք գնելու ժամանակ ուշադրութիւն դարձնել „ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ" անուան և ֆիրմայի վրա, որովհետև ուրիշ պատրաստվածները ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ նմանեցված կեղծիքներ, որոնք՝ ազդեցութեան տեսակէտից՝ ոչ մի առնչութիւն չունեն նրա հետ քանի որ միակ իսկական սպերմին ներկայանում է ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ: Սրուակը 3 ռուբ.: Գրականութիւնը՝ ուղարկվում է ըստ առաջին պահանջման ձրի:

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ
ՊՐՕՖԷՍՍՕՐ ԴՕԿՏՕՐ ՊԷԼԻ ԵՒ ՈՐԴԻՔ
Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ պալատի— Ս.-Պետերբուրգում:
(П. 77035.) 455. 8—7

ԲԺՇԿԱՊԵՏ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Ամառը գտնվում է ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ (Կովկաս. հանք. ջրերում), որտեղ ընդունում է հիւանդներին մինչև սեպտեմբեր: Верхній бульваръ, д. кв. Гирей.
(Ե. Հ. Կ.) 565. 0—35

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.
Արաս-Արաքսկայա, տուն Միրիմանօվի:
(Ե. Հ. Կ.) 725. 100—25

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ:
Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաների) / 5—7 ժ. երեկ. (բոլորին)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆօն № 388
(օ. մ.) 909. 100—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԸ ՓՆՏՐՈՒԻ

Մուրադ Տէրմօեան. 30 տարեկան. Բիթլիսի Չրակերտ Հիզ գիւղացի. 1905 թւականներուն կապրէր Կովկաս, Եկատերինոդար քաղաք՝ Նովի-բազար փողոցը: Հայ-Թիւրքական կռիւներէն վերջ անհետացած է ու իր ըլալը չգիտցուի. հասցէն գիտցողը թող հաճի գրել Cabinet «Ararad», Bourgas, Bulgarie. Հայոց «Արարատ» ընթերցատունը, Բուրգաս, Բուլղարիա: 922. 1—1

Վեհափառ Կաթողիկոսը
Սանահնի վանքում
18 գոյնով մեծադիր պատկեր
ԳԻՆԸ 3 Ր.
●— ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ —●
միևնոյն հասցէով ստացող բաժանորդներին ձրի:
Դիմել՝ Тифлисъ. Бюро Печати, Мадатовская, 5.
(Ե. Կ.) 811. 0—10

2 ՋԳԵՍՏԱՅՈՒ 4 ՌՈՒԲԼՈՎ

Տղամարդկանց հագուստեղէնի շրջանում նորութիւն է «Զէֆիրօ Տուրինը»: Այնպիսի էժան գնով՝ ինչպէս 2 րուբ., $4^{1}/_{4}$ արշ. կտորը, տղամ. ամբողջ զգեստացու, ոչնչով չէ տարբերվում արշ. 2—3 րուբ. արժեցող կտորից և ունի վերջինիս բոլոր յատկութիւնները, այն է՝ բարձր տես. ամրութիւն, գործնականութիւն և էլեգանտութիւն: Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն: Այդպիսի 2 կտորը ուղարկվում է 4 րուբլով, ճանապարհածախը՝ 70 կ., պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ.: Չորս և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախը ֆաբրիկայի հաշւին: Առանց ռիսկի; լրիւ երաշխաւոր., եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում: Պահանջները հասցէագրել. въ фабрику шерстяныхъ издѣлій Т-ВА «ЭХО», г. Лодзь, № 70.
Թղթակցութիւնները ռուսերէն:
(ա. օ.) (В. 50359) 872. 17—7

Երեւանի ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ բարձր դասարանների համար հարկաւոր է
Մի լեզուագէտ-մանկագէտ
ՈՒՍՈՒՑԻՉ
ռուսաց լեզուի, ռուսաց գրականութեան և ռուսաց պատմութեան համար շաբաթական 24 դասով և 70 ր. դասագնով: Ցանկացողները իրանց խնդրագրերի հետ պէտք է ներկայացնեն ուսման իսկական վկայագրերը կամ նրանց վաւերացված պատճէնները:
Խնդրագրերը պէտք է ուղարկել մինչև օգոստոսի 20-ը Երևան Հոգաբարձութեան հասցէով:
(ա. օ.) 899. 10—6

2 ՋԳԵՍՏ 5 Ր. 25 Կ.

Տարածելու նպատակով մենք ուղարկում ենք 12 ր. փոխարէն 5 ր. 25 կօպէկով հետևեալ զգեստացու 2 կտորները. 1) $4^{1}/_{4}$ արշ. ֆրանս տրիկօ տղամ. զգեստի համար, շատ ամուր, գործնական և մօդային նկարներով բրդէ կտոր: 2) 8 արշ. կտոր «Անգլէ», կանանց ամբողջ զգեստի համար, միանգամայն մօդային և գեղեցիկ բրդէ կտոր: Այդպիսի 2 կտոր լաւ տեսակից՝ ուղարկում ենք 5 ր. 75 կ.-ով: Ճանապարհածախը 55 կ.: Երկու և աւելի զոյգ կտոր բերել տալուց ճանապարհածախը մեր հաշւին: Ուղարկում ենք պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ. և երաշխաւոր., եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում: Պահանջները հասցէագրել. г. Лодзь, № 70, въ фабрику ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ.
Թղթակցութիւնները ռուսերէն:
(ա. օ.) (В. 50257) 871. 17—7

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՊԼՕՄՈՎ
Մի փորձառու ուսուցիչ
կամենում է տեղ ստանալ հայոց միջնակարգ դպրոցներում, դասաւանդելով մաթեմատիկական առարկաները, ընդհանուր պատմութիւնը, գրականութիւնը և գերմաներէն լեզուն:
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ".
(օ. մ.) 912. 5—3

Ուղարկում եմ պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճարի «Տրիումֆ» շէվիօտի մի ամբողջ կտոր $4^{1}/_{4}$ արշ., տղամարդկանց
ԶԳԵՍՏԻ ՀԱՄԱ. 2 Ր. 75 Կ.
Չը նայած որ շատ էժան է, «ՏՐԻՈՒՄՖ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր լաւ կտորների յատկութիւնը միանգամայն ամուր է, գործնական և շքեղ: Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն: Ճանապարհածախը 55 կ.: Նոյնպէս ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործնական և գեղեցիկ ՊԻՋԱԿ 2 րուբլով տարվայ ամեն սէզօնին մաշելի: Ճանապ. 55 կ.: 2 րուբլով ՇԱԼՎԱՐ ուղարկում եմ պատրաստ, ամուր և գործնական կտորից կարված: Ճանապարհածախը 35 կ.: Երեք և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախը իմ հաշւին: Պահանջները հասցէագրել. г. Лодзь, № 70, фабрика ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ.
Թղթակցութիւնները ռուսերէն:
(ա. օ.) (В. 50155) 870. 17—7

ԻՄ Կրօնի դասագրքեր ցանկացողները կարող են դիմել բոլոր հայ գրավաճառներին և ինձ (Бебутовская ул. 20): Զեղչը՝ ինչպէս յայտարարված է գրքերի կազմի վրա:
ՍԱՀԱԿ ա.-քահ. ՍԱՀԱԿԵԱՆՑ
(Ե. ու.) 903. 10—2

Լոյս են տեսել և վաճառվում են
Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ
Դասագրքերը:
1) Իրաշրջանների վերածված թւաբանական խնդիրների ժողովածու: Ա. և Բ. տարիների դասընթաց: 1910 Թ. 30 կոպ.
2) Հարտման-Ռուզամի՝ Իրաշրջանների վերածված թւաբանական խնդիրների ժողովածու: Գ. տարվայ դասընթաց: Բ. տպ. 1910 Թ. 30 կոպ.
3) Նոյն գրքի՝ Դ. տարվայ դասընթաց: 1909 Թ. 35 կոպ.
Պահեստը «Գիր» գրավաճառանոցում (Тифлисъ, Вельяминовская ул. № 7).
(Ե. ու.) 916. 6—1

Օգտվեցէք տեխնիկայի պտուղներից!



20-րդ դարը բերել է մեզ հետաքրք. և օգտ. մի նորոյթ.—Գրպանի ժամաց. մշտական օրացոյցով, որը աւտոմատիկ կերպով ցոյց է տալիս ամիսը, օրը, Թիւը, լուսնի օրերը, ժամերը, րօպէները և վայրկեանները: Այդ յատկութ. ի նկատի առնելով՝ այդ ժամաց. ներկայիս առաջին անհրաժեշտ. է ներկայանում: Այդ ժամաց. մինչև այժմ ծախվում էին թանգ գնով և անմատչելի էին շատերին: Շվէյցար. ֆաբրիկ. հետ յարաբեր. մէջ մտնելով՝ մենք թոյլատուութիւն ենք ստացել ծախելու այդ ժամաց. փոխանակ 8 րուբ. միայն 4 ր. 50 կոպ. իւրաքանչիւրը, այն պայմանով միայն, որ տարեկան սպառենք 120.000 հատ, հակառակ դէպքում արժէքը պիտի բարձրացվի: Դրա համար ամենքդ շտապեցէք պատուիրել այդ ժամաց., որ կազմված է սև պողպատից, անկերային ընթացքով ու քարերով, մետաղեայ շքեղ ցիֆերբլատով՝ որ ցոյց է տալիս ամիսը, օրը, Թիւը, լուսնի օրը, ժամը, րօպէն և վայրկեանը: Ուղարկում ենք անյապաղ, ուղիղ ընթանելու համար 6 տ. երաշխաւորութեամբ, վերադիր վճ. և առանց կանխավճ.: Ճանապարհածախը 40 կոպ., Միջին-Ասիա և Սիբիր՝ 80 կ.: Իւրաքանչիւր ժամաց. կցվում է ձրի յաւելուած՝ չը սևացող շղթայ բրելօկով, երկար կամ կախելու, ժամաց. զողացվելուց պահպանող իր և զամշեայ քսակ: Հինգ հատ ժամաց. միանգամից պահանջելուց՝ ձրիաբար կցում ենք սեղանի վրա դնելու «բուդիլնիկ»-ժամաց. սև ցիֆերբլատով: Պատուէրները խնդրում ենք հասցէագրել՝ Въ «БАЗАРЪ НОВОСТЕЙ», Варшава, Граничная, 5—17.
P. S. Ժամաց. չը հաւանելու դէպքում՝ յետ ենք վերցնում ու փողը վերադարձնում:
(10,30) (В. 52486) 917. 2—1

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES»

Օգոստոսի 11-ին (ըստ ն. տ. օգոստոսի 24-ին) մեկնելու է Բաթումից առաջնակարգ «Danub» շոգենաւը հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէլ, Հավր և Լօնդօն:

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, Նիւ-Եօրկ և Շանխայ (Չինաստան), Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում, պակասեցրած գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալին, նախկին Արծրունու գալերէյում Թիւ 127 գրասենեակը, հեռախօս Թիւ 608: Գրասենեակը բաց է՝ 9—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, ամեն օր, բացի կիրակի օրերից: 927. 1—1

ՀԻՊՆՈՏԻԶՄ

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ

Հիպնոտիզմը բնական ձիրք չէ: Ամեն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան:

◆

Հիպնոտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուտել խմելը:
Հիպնոտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մոլորութիւններն ու վատ բարքերը:
Հիպնօզական ցուցահանդէսները չափազանց զուարճալի են:
Սովորեցէք հիպնօզացնելու արուեստը: Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և այդ սքանչելի ոյժի միջնորդութեամբ դարմանեցէք հիւանդութիւններ, տուէք զարմացուցիչ ցուցահանդէսներ թատրօններում կամ մասնաւոր սրահներում և դարձէք պրօֆէսիօնալ հիպնօտիստ:
Սովորելու ծախքը շատ չնչին է:
Ստացէք իմ «Ինչպէս հիպնօտացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիակատար բացատրութիւն հիպնօտիզմի, Մեսմերիզմի, Հոգեբուժութեան, Ներշնչման, Հոգեհեռաւութեան և Տելեպաթիի մասին: Այս գրքոյկն ստանալու համար պիտի ուղարկել 10 կոպէկի նամականիշ ճանապարհածախքի համար:
ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ: Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ: Դիմել հետևեալ հասցէով Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago, Ill. U. S. A.
(Ե. Չ.) 689. 100—20

Типографія „Экономія" Большая Ванкская № 3.